ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԵԿԻՆԻ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծությունն իրականացվել է
«Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան»
ծրագրի շրջանակներում

Երևան 2020

«Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի նպատակն է ուժեղացնել Հայաստանի օրենսդիր մարմինը, որպեսզի այն իրականացնի օրենքների մշակման, վերահսկողության և ներկայացուցչականության ապահովման իր առանցքային գործառույթները: Ինչպես նաև, աջակցել խորհրդարանին, որպեսզի պետական կառավարման համակարգում կիրառվեն նոր գործիքներ ու մեխանիզմներ, որոնք կնպաստեն աշխատանքի որակի բարելավմանը, թափանցիկության և ներառականության ապահովմանը, գենդերային զգայուն քաղաքականությունների մշակմանը:

Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՀՀ Ազգային ժողովի, «ՕքսԵՋեն» հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ՝ Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

Հետազոտությունը պատրաստվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում, ծրագրի գործընկեր՝ «ՕքսԵՋեն» հիմնադրամի կողմից: Հետազոտությունում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և չեն արտահայտում ՄԱԶԾ-ի կամ ծրագրի այլ գործընկերների տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ՄԱՍ 1. ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝ *ԿԱՆԱՆՑ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ* 8
ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ 10
ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 42
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 45
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ 47
ՄԱՍ 2. ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝ *ԿԱՆԱՅՔ ԵՎ ՋԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* 49
ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ 51
ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 53
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ 65
ՄԱՍ 3. ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝ *ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ* 66
ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ 68
ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 72
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 89
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ 91
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 92

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՆԽՎԿ/ CEDAW	ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՎԾ	Հայաստանի վիճակագրական ծառայություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ-ի ԱԽ	ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՊԳԾ	Պեկինի Գործողությունների ծրագիր
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՀՏՖ	Համաշխարհային տնտեսական ֆորում
ՄԶԻ	ՄԱԿ-ի Մարդկային զարգացման ինդեքս
STEM	Sience, technology, enginnering and mathematics; չորս հատուկ առարկաներում՝ գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՀՀ ԿԳՄՄՆ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն
ՈԱԾ	Որակավորումների ազգային շրջանակ
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցության կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ), ներկայումս՝ Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ (ՆԱԿՀ)
ԱԶԲ/ADB	Ասիական զարգացման բանկի
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
TIMSS	Trends In International Mathematics And Science Study/Մաթեմատիկայի և բնագիտության միջազգային միտումներ
ՈԱԱԿ	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ԼՂ/ ԼՂՀ	Լեռնային Ղարաբաղ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ICSE	ԱՄԿ Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգիչ
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին լրանում է 25 տարի այն օրվանից, երբ 1995-ին, ավելի քան 17 հազար պաշտոնական պատվիրակներ 189 երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, հավաքվեցին Պեկինում՝ Կանանց չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում[1]:

Քննարկումներն ընթանում էին երկու զուգահեռ հարթակներում՝ պաշտոնական մակարդակի համաժողովն անցկացվում էր Պեկինում, միաժամանակ Պեկինի մերձակայքում գտնվող Հուայրոուում տեղի էր ունենում ոչ կառավարական կազմակերպությունների ֆորումը՝ 30 հազար ակտիվիստների մասնակցությամբ:

Պեկինի խորհրդաժողովի մասնակից 189 պետությունները պարտավորություններ ստանձնեցին միաձայն ընդունված **Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի** շուրջ:

Գործողությունների ծրագիրը մինչ օրս ամենաընդգրկուն և հիմնարար համաձայնագիրն է համարվում կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման և գենդերային հավասարության ձեռքբերման ոլորտում: Փաստաթղթի ծավալն ու խիստ համակարգված կառուցվածքն ինքնին տպավորիչ են. 12 մտահոգության ոլորտներ և յուրաքանչյուրի շրջանակում՝ իրավիճակի վերլուծություն, ռազմավարական նպատակների նախանշում և դրանց ուղղությամբ գործողությունների հանձնարարականներ՝ հասցեագրված կառավարություններին, քաղաքացիական հասարակությանը և այլ պատասխանատու մարմիններին[2]:

Ըստ էության, հենց Պեկինի Գործողությունների ծրագրով է շրջանառության մեջ դրվել կանանց ու տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների բանաձևը, որը կոչված էր վերացնելու կանանց հռչակված իրավունքների և դրանց արդյունավետ իրացման հարցում առկա խզումը:

Հետպեկինյան գործընթացների շրջանակներում հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների բանաձևը, իր հաստատումը գտնելով բոլոր

[1] 1995-ին Հայաստանից 26 կին էր մասնակցում Պեկինի խորհրդաժողովին՝ պաշտոնական պատվիրակության 8 անդամներ և ոչ կառավարական կազմակերպությունների 18 ներկայացուցիչներ: Ի դեպ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն այն եզակի հոգևորականներից էր, որ այդ օրերին ուղերձ էր հղել կանանց չորրորդ համաշխարհային խորհրդաժողովի մասնակիցներին:

[2] Փաստաթղթի հայերեն թարգմանությունը, ցավոք, միայն կրճատ, ոչ պաշտոնական թարգմանությամբ է հասանելի:

հետագա ծրագրային փաստաթղթերում, համալրվեց նաև հավասար արդյունքի կոնցեպտով:

Պեկինի Գործողությունների ծրագրի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ի սկզբանե հաջողվեց ապահովել պետությունների և քաղաքացիական հասարակության կարծիքների խաչաձևումն ու միասնությունը և դրա շնորհիվ այդ փաստաթղթի բարձր որակը:

Դեռևս ծրագրի մշակման փուլում ակնհայտ էր, որ սոսկ քաղաքական կամքը բավարար չէ գենդերային հավասարության գաղափարը կենսագործելու համար, անհրաժեշտ է ներգրավել քաղաքացիական հասարակության բոլոր հաստատությունները, որոնք կարող են ազդել հասարակական կարծիքի վրա, հետևապես 12 մտահոգության ոլորտների վերաբերյալ հանձնարարականները ուղղված են թե՛ պետական, թե՛ քաղաքացիական հասարակության կառույցներին:

Պեկինի Գործողությունների ծրագիրը ոչ միայն պետությունների համար գենդերային հավասարության ապահովման հիմնարար ուղեցույց է, այլև կանանց շարժման զարգացման համընդգրկուն ռազմավարություն: Պեկինի Գործողությունների ծրագիրը ողջ աշխարհում, այդ թվում և՝ Հայաստանում, կանանց կազմակերպությունների աճի հզոր խթան դարձավ:

Եվ թեպետ 1995-ից հետո Հայաստանում ստեղծված ավելի քան 50 կանանց կազմակերպություններից ոչ բոլորը կարողացան ժամանակի ընթացքում կայանալ, Պեկինի Գործողությունների ծրագիրը ճանապարհային քարտեզ ծառայեց բազմաթիվ կանանց կազմակերպությունների զարգացման համար, որը շարունակվում է հանրապետությունում նորաստեղծ հասարակական կազմակերպությունների՝ այդ ռազմավարական փաստաթղթի իմաստավորման և նորովի ընթերցման միջոցով:

Այսօր այդ պարտավորությունների կատարման շուրջ սկիզբ առած Պեկին+25 գործընթացի շրջանակում Հայաստանն առավել քան ակտիվ դերակատարում ունի, քանի որ 2020-2021 թթ. նախագահող երկիր է հանդիսանում է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովում, որը Պեկինի Գործողությունների ծրագրի իրականացման հարցերում վերահսկող մարմինն է:

Պեկինի խորհրդաժողովում ձևավորված ավանդույթով այսօր էլ՝ 25 տարի անց, Պեկինի Գործողությունների ծրագրի իրականացման դիտարկումը կատարվում է երկու մակարդակով՝ պաշտոնական՝ կառավարությունների կողմից ներկայացվող ազգային զեկույցների և դրան զուգահեռ՝ ոչ կառավարական՝ այլընտրանքային զեկույցների միջոցով:

Սույն փաստաթուղթը, լինելով Հայաստանում ***Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի իրականացման վերլուծություն,*** հանդիսանում է այլընտրանքային զեկույցի մի տարբերակ, որն անդրադառնում է Պեկինի Գործողությունների ծրագրի 12 մտահոգության ոլորտներից Հայաստանի համար առանցքային կարևորություն ունեցող 3-ի՝ ***Կանանց կրթությունն ու մասնագիտական պատրաստումը. Կանայք և զինված հակամարտությունները և Կանայք և տնտեսությունը*** ուսումնասիրությանը:

ՄԱՍ 1. ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝

ԿԱՆԱՆՑ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Պեկինի Գործողությունների ծրագրում ***Կանանց կրթությունն ու մասնագիտական պատրաստումը մտահոգության ոլորտում*** ամրագրված ռազմավարական նպատակներն են՝

1. կրթության հավասար մատչելիության ապահովում.
2. կանանց շրջանում անգրագիտության վերացում.
3. կանանց համար մասնագիտական-տեխնիկական պատրաստման, գիտության և տեխնիկայի ոլորտում կրթության և անընդհատ կրթության մատչելիության ընդլայնում.
4. կրթության և մասնագիտական պատրաստման անխտրական մոտեցումների մշակում.
5. ռեսուրսների բավարար ծավալի հատկացում կրթության ոլորտի բարեփոխումների համար և դրանց իրականացման ընթացքի վերահսկողություն.
6. աջակցություն աղջիկների և կանանց կրթությանն ու մասնագիտական պատրաստմանը ամբողջ կյանքի ընթացքում:

Ստորև ներկայացվում է վերջին հինգ տարիների ընթացքում կրթության և մասնագիտական պատրաստման ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության ձեռքբերումների և համակարգային խնդիրների ընդհանուր գնահատականը: Ներկայացվում են նաև առաջարկություններ՝ բարձրացնելու կառավարության գործողությունների արդյունավետությունը:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Կրթության և մասնագիտական պատրաստության ոլորտում վերջին 5 տարներին մեծ ձեռքբերումներ չեն արձանագրվել, թեպետ որոշ դրական փոփոխություններ կան:

Թերևս ամենազգալի փոփոխությունը այն է, որ 2015 թ.-ից միջնակարգ կրթությունը դարձել է պարտադիր (մինչ այդ պարտադիր էր հիմնական կրթությունը): Դա ամրագրվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 2015 թ. ապրիլի 8-ի լրացումով, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր դարձավ մինչև 19 տարեկան սովորողների համար:

Դրական տեղաշարժ է նաև այն, որ ՀՀ կառավարությունը վերջապես ընդունեց և բարձրաձայնեց, որ հանրապետությունում կան դպրոցից դուրս մնացող երեխաներ: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 2020 թ. մարտի 6-ի լրացումով ՀՀ կառավարության իրավասության մեջ մտավ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի սահմանումը[3]:

Ավելի է ընդգծվում ներառական կրթության անհրաժեշտությունը: Նախատեսվել է հեռավար և կրեդիտներով ուսումնական գործընթացի կազմակերպումը դպրոցներում:

Թեպետ փոքր, բայց ձեռքբերում է, որ երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում 2014 թ. (29%) համեմատությամբ 2018 թ. աճել է՝ հասնելով 34%:

Կրթության որոշ ոլորտներում գենդերային խտրազատումը (սեգրեգացիան) կրճատվել է: Այսպես վերջին 10 տարվա ընթացքում մաթեմատիկական գիտությունների, քիմիայի և արվեստի գծով աղջիկների տոկոսը աճել է: Կրկնապատկվել է դոկտորանտուրա ընդունված և ավարտած կանանց թիվը:

Գենդերային ոլորտի փորձագետների ջանքերով հանրակրթական դպրոցի որոշ ուսումնամեթոդական փաթեթներ և դասագրքեր ենթարկվել են գենդերային

[3] http://parliament.am/legislation.php?sel=show&ID=6984&lang=arm

փորձաքննության: Հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչը, ծրագիրը, 8-րդ դասարանի դասագիրքը և ուսուցչի ձեռնարկը փորձաքննվել են գենդերային կարծրատիպերի, գենդերային անհավասարությանը վերաբերող նյութերի վերհանման և բացառման տեսանկյունից, մշակվել և ներկայացվել են առաջարկություններ: Ուսումնական գրականության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշների ստեղծման ուղղությամբ իրականացվել է տարրական դպրոցի՝ «Այբբենարան», «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը», «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաների հիմնական և այլընտրանքային դասագրքերի գենդերային փորձաքննություն:

Գենդերային կարծրատիպերին, հավասարությանն ու հանդուրժողականությանը, գենդերային քաղաքականությանը վերաբերող թեմաները ընդգրկվել են հանրակրթական դպրոցների փոխտնօրենների, դասղեկների, սոցիալական մանկավարժների, հոգեբանների վերապատրաստման ծրագրերում:

Ակտիվացել են աշխատանքները աղջիկների ներգրավման համար STEM[4] կրթության ոլորտում: «Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման արդյունքում 2019 թ. տվյալով ՀՀ բոլոր մարզերում գործում են ինժեներական լաբորատորիաներ և ռոբոտաշինական խմբակներ: Ծրագիրը պետք է նպաստի աղջիկների և կանանց հմտությունների բարձրացմանը և STEM-ի գիտելիքները, ինչպես նաև հեշտացնի նրանց մուտքը աշխատաշուկա:

Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում կանանց ներգրավվածություն համարվում է ոչ ցածր՝ 37%, սակայն այն պոտենցիալ աճի հնարավորություն ունի, եթե այս ուղղությամբ ավելի նպատակաուղղված աշխատանք տարվի:

[4] STEM – Sience, technology, enginnering and mathematics; STEM-ը ուսումնական ծրագիր է, որը հիմնված է չորս հատուկ առարկաներում ՝ գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա, ուսանողներին կրթելու գաղափարի վրա՝ միջառարկայական և կիրառական մոտեցմամբ:

Իրավանորմատիվային կարգավորումներ

ՀՀ-ում կրթության համակարգը ընդգրկում է նախադպրոցական կրթությունը, 12-ամյա միջնակարգ կրթությունը (տարրական՝ 4 տարի, հիմնական՝ 5 տարի, ավագ՝ 3 տարի), բարձրագույն կրթություն (ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներով), հետբուհական (ՈԱՇ-ի 8-րդ մակարդակ՝ ասպիրանտուրա և դոկտորանտուրա աստիճաններով): Ըստ ՀՀ օրենսդրության՝ միջնակարգ կրթությունն պարտադիր է և անվճար, յուրաքանչյուր ոք ունի մրցութային հիմունքներով մասնագիտական անվճար կրթություն ստանալու իրավունք:

Հանրապետությունում 2010 թ. ընդունվել է «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»[5], 2013 թ.՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որոնցում ամրագրվում են խտրականության արգելքը, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները և հավասար հնարավորությունները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Կրթության ոլորտը կարգավորվում է մի շարք օրենքներով՝ «Կրթության մասին» (1999), «Նախադպրոցական կրթության մասին» (2005), «Հանրակրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (2005), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (2004: Կրթության ոլորտը կարգավորող օրենքներում հռչակված են սովորողների հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը:

2015 թ. ավարտվեց ՀՀ Կառավարության կողմից հաստատված **«Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը»**: Ծրագրի «Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը կրթության ոլորտում» ենթահատվածում նախատեսվում էր.

[5] https://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf, էջ 16

- ներառել գենդերային բաղադրիչը կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ.
- ստեղծել ուսումնամեթոդական հիմք՝ գենդերային գիտելիքների հիմունքների դասավանդման համար.
- ներդնել գենդերային գիտելիքների հաղորդման բաղադրիչ (մոդուլ) մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացներում.
- ներդնել ուսումնական գրականության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշներ.
- խթանել գենդերային գիտական հետազոտությունների անցկացումը:

Ծրագրի իրականացման մոնիթորինգը ցույց տվեց, որ թեև *ռազմավարական ծրագրով նախատեսվել էր գենդերային բաղադրիչի ներառում կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ և այդ ուղղությամբ որոշ աշխատանք է կատարվել, սակայն Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները անմիջականորեն ներառված չեն ռազմավարական ծրագրում, և դրանց ուղղությամբ համակարգված աշխատանք չի իրականացվել*[6]:

2015-2018 թթ. գենդերային քաղաքականության վերաբերյալ որևէ ծրագիր հանրապետությունում չի ընդունվել, ինչը մեծապես վնասել է այս ուղղությամբ առաջընթացին: Այնուհետև ՀՀ Կառավարությունը 2019 թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ հաստատել է **«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը»:** Ռազմավարության 3-րդ գերակայությունն է՝ «Կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության և հավասար հնարավորությունների ընդլայնում կրթության ու գիտության ոլորտում», որի իրականացման արդյունքում ակնկալվում է, որ՝

1) սովորողների շրջանում կկանխարգելվի գենդերային խտրականության ձևավորումը.

2) կապահովվի հանրակրթական, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների շրջանում մարդու իրավունքների, ժողովրդավարության, գենդերային հավասարության վերաբերյալ բարձր իրազեկվածությունը.

[6] Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց, Երևան, 2015, ՄԱԶԾ http://un.am/up/library/Assessement_2011-2015_Gender%20Policy_arm.pdf

3) կապահովվի հանրակրթական դպրոցի սովորողների շրջանում առողջ ապրելակերպի և սեռային դերերի թեմաների շուրջ բարձր իրազեկվածությունը, սովորողների մեջ կձևավորվեն անհրաժեշտ կյանքի հմտություններ.

4) տարբեր սոցիալական պատճառներով դպրոց չհաճախող երեխաների (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողների, ազգային փոքրամասնություններին պատկանողների և գյուղական բնակավայրերում ապրող աղջիկների) բացահայտումը և դպրոցներում նրանց ներառումը.

5) կապահովվեն ուսումնական հաստատությունների ղեկավար անձնակազմի ու մանկավարժների շրջանում գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և գենդերային զգայունության ձևավորումը.

6) կձևավորվի համընդհանուր ներառականության գործընթացի գենդերային զգայունությունը.

7) կրթության և գիտության ոլորտում վեր հանված գենդերային խտրականության դրսևորումների հանդեպ արդյունավետ քաղաքականություն կիրագործվի.

8) կապահովվեն մասնագիտությունների վերաբերյալ գենդերային կարծրատիպերի փոխակերպումը և մասնագիտության ընտրության ընթացքում գենդերային խտրականության դրսևորումների բացառումը։

Հատկապես կարևոր, որ ռազմավարությունն անդրադարձ է կատարում տարբեր սոցիալական պատճառներով դպրոց չհաճախող երեխաների խնդիրներին և ձևակերպում այդ խնդիրների լուծման հետ կապված ակնկալիքները (տես 4-րդ կետ)։ *Այսպիսով, ՀՀ օրենսդրությունում, իրավանորմատիվային փաստաթղթերում ամրագրված են՝ սեռի սկզբունքով խտրականության արգելքը, անկախ սեռից անվճար միջնակարգ կրթության պարտադիր լինելը, մրցութային կարգով մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալը, մրցութային կարգով հետբուհական կրթության իրավունքը։*

Կրթության հավասար մատչելիության ապահովում

Օրենսդրական մակարդակում կրթության ոլորտում խտրականությունը բացակայում է, սակայն թաքնված խտրականության, ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց տեղի ու դերերի վերաբերյալ գենդերային կարծրատիպերի առկայության պայմաններում, անձի կամ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի և ազգային փոքրամասնություններին պատկանելության համատեքստում տարբերություններ կան հնարավորությունների, կրթություն ստանալու մոտիվացիայի, մասնագիտական կողմնորոշման ընտրության և մասնագիտական աճի տեսանկյունից:

Հանրակրթություն

Նախադպրոցական կրթություն: 2018 թ. ՀՀ-ում գործել են 884 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություններ (ՆԴՀ), որոնցից 686-ը՝ մանկապարտեզ, 67-ը՝ մսուր-մանկապարտեզ, 131-ը՝ դպրոց-մանկապարտեզ[7]:

Գծապատկեր 1. ՆԴՀ-երը քաղաքներում և գյուղերում



Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում կազմել է 31.6% (աղջիկներինը՝ 33.6%), ընդ որում, քաղաքներում՝ 36.5%, գյուղերում՝ 22.6%[8]: 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում եղել է 59.9%, 6 տարեկաններինը՝ 33.2%, 1.5-3 տարեկաններինը՝ 6.6%[9]: Այսինքն՝ հատկապես ցածր է ապահովվածությունը մսուր-մանկապարտեզներով:

[7] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 20:
[8] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_1.pdf, էջ 4:
[9] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_1.pdf, էջ 7:

Աղյուսակ 1. Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում ըստ մարզերի, 2018 թ.

	ՆԴՀ քանակը	աղջիկներ	տղաներ
Երևան	220	16207	16805
Արագածոտնի մարզ	30	1219	1220
Արարատի մարզ	78	3251	3491
Արմավիրի մարզ	103	3186	3339
Գեղարքունիքի մարզ	47	1813	2004
Լոռու մարզ	94	2494	2655
Կոտայքի մարզ	53	3157	3484
Շիրակի մարզ	114	2613	2842
Սյունիքի մարզ	50	2184	2349
Վայոց ձորի մարզ	31	636	731
Տավուշի մարզ	64	1637	1757
Ընդամենը	884	38397	40677

Ինչպես երևում է աղյուսակից, ըստ մարզերի երեխաների ընդգրկվածության մակարդակը խիստ տարբերվում է:

Գծապատկեր 2. Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ում ըստ մարզերի, 2018 թ.



Բերված գծապատկերում առավել հստակ է երևում տարբերությունը մարզերի միջև: Ամենաբարձր ցուցանիշը գրացվել է Սյունիքում, որտեղ երեխաների ընդգրկվածությունը կազմում է 53.3%, ամենացածրը՝

Գեղարքունիքում՝ 21.9%[10]: 2018 թ. նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների 49%-ը աղջիկներ են եղել[11]:

Աղյուսակ 2. Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում ըստ մարզերի (տոկոսներով), 2014 – 2018 թթ. համեմատությամբ

	2014		2018	
	ընդամենը	Աղջիկներ	ընդամենը	աղջիկներ
Երևան	36.8	37.6	36.0	37.1
Արագածոտնի մարզ	19.3	20.3	22.8	24.6
Արարատի մարզ	27.2	28.0	31.4	32.3
Արմավիրի մարզ	20.3	21.8	31.9	33.4
Գեղարքունիքի մարզ	16.4	18.6	21.1	21.9
Լոռու մարզ	22.7	23.3	28.4	28.9
Կոտայքի մարզ	27.9	27.9	31.7	31.8
Շիրակի մարզ	21.6	23.1	27.3	27.9
Սյունիքի մարզ	42.1	45.2	52.6	53.3
Վայոց ձորի մարզ	25.3	27.8	37.5	36.5
Տավուշի մարզ	33.5	34.6	39.7	41.2
Ընդամենը	28.7	29.9	32.6	33.6

Գրեթե բոլոր մարզերում 2014 թ. համեմատությամբ կա բարելավում: Հատկապես մեծ է աճը Արմավիրի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերում: Պետության կողմից նախադպրոցական հաստատությունների քանակի ավելացման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվում է: «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում 2017 թ. ՀՀ Արագածոտնի, Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում հիմնվել է 23 նախակրթարան, որից 18-ը՝ գյուղական, 5-ը՝ քաղաքային համայնքներում, ընդհանուր առմամբ՝ 1200 երեխայի ընդգրկմամբ: Այդուհանդերձ, իրավիճակը ոլորտում դեռևս գոհացուցիչ չէ: 2019 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համագործակցությամբ վերանայվել են Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները: Մշակվել են Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ

[10] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_1.pdf, էջ 25:
[11] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_1.pdf, էջ 2:

մոդելները: Վերջին տվյալներով՝ Հայաստանում ավելի քան 171 հազար երեխա կամ երեխաների 70%-ը մանկապարտեզ չի հաճախում[12]:

Ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսություններում կազմել է 33%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում, համապատասխանաբար, 28% և 0%[13]: Մանկապարտեզ չհաճախելու հիմնական պատճառներն են՝ երեխայի մոր չաշխատելը (39.5%), տվյալ բնակավայրում մանկապարտեզ չլինելը (11.3%), դրանից օգտվելու թանկությունը և նախադպրոցական հաստատության փակ լինելը (2.1%)[14]: Ըստ 2018 թ. հետազոտության տվյալների՝ գյուղաբնակ տնային տնտեսությունների 59.9%-ը պատասխանել է, որ նախադպրոցական հաստատությունը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Մանկապարտեզը գտնվում է 10 կմ-ից հեռու տնային տնտեսությունների 5.4%-ի[15] համար, և այդ պայմաններում, հատկապես հանրային տրանսպորտի բացակայության կամ անմատչելիության պայմաններում, աղքատ ընտանիքների համար դրանից օգտվելը ավելի դժվար է: ՅՈՒՆԻՍԵՖ-ի նոր՝ «Սովորելուն պատրաստ աշխարհ՝ առաջնահերթությունը տալով որակյալ նախադպրոցական կրթությանը» զեկույցում նշվում է, որ այն երկրները, որտեղ երեխաների մեծ մասը նախադպրոցական կրթություն չի ստանում, կորցնում են շահավետ ներդրում կատարելու հնարավորությունը, որը խորացնում է անհավասարությունը հասարակության շրջանում[16]:

Այսպիսով, թեպետ օրենսդրությամբ սահմանված է երեխայի նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը, սակայն երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում շատ ցածր է: Ըստ սեռի տարբերությունները մեծ չեն և, որպես կանոն, համապատասխանում են տարիքային խմբերի համամասնությանը, սակայն մեծ տարբերություններ

---

[12] http://womennet.am/%d5%af%d5%a1%d5%bc%d5%a1%d5%be%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d5%ad%d5%b8%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a7-%d5%af%d5%a1%d5%a6%d5%b4%d5%a1%d5%af%d5%a5/

[13] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 28:

[14] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 29:

[15] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 30:

[16] A World Ready to Learn: Prioritizing quality early childhood education, global report, UNICEF https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/A%20World%20Ready%20to%20Learn_MAIN%20REPORT%20%28embargoed%20until%209%20APRIL%29.pdf

կան ըստ մարզերի, քաղաք-գյուղ և ընտանիքի սոցիալական վիճակի տեսանկյունից: Գյուղի երեխաների ավելի մեծ մասն է զրկված նախադպրոցական հաստատություն հաճախելու հնարավորությունից: Կա տարբերություն նաև ըստ բնակավայրերի մանկապարտեզների շենքային պայմանների և ռեսուրսների միջև: Դեռևս տվյալներ չկան, թե համայնքների խոշորացման հետ կապված որքանով է փոխվել իրավիճակը: Եթե խոշորացված համայնքում առկա մանկապարտեզները սպասարկելու են համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի երեխաներին, ապա խնդիր կարող է առաջանալ տնից մանկապարտեզի մեծ հեռավորության, տրանսպորտի բացակայության՝ հատկապես աղքատ ընտանիքների երեխաների համար:

Միջնակարգ կրթություն: Դեռևս ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակների համատեքստում Հայաստանի կառավարությունը կրթության ոլորտին առնչվող իր հանձնառություններում խնդիր էր դրել մինչև 2015 թվականը հասնել հիմնական դպրոցում երեխաների համընդհանուր ընդգրկման՝ 99,4%, ավագ դպրոցում՝ 95%, սակայն դրված նպատակները չեն իրականացվել: 2018/2019 ուսումնական տարում դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 83.0%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 91.1%, հիմնական դպրոցում՝ 89.4%, ավագ դպրոցում՝ 59.9%[17]:

[17] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf, էջ 6:

Գծապատկեր 3. Հազարամյակի զարգացման նպատակներով մինչև 2015 թ. ՀՀ հանձնառությունների և 2018 թ. տվյալների համապատասխանությունը, տոկոսներով



Տարրական դպրոցի սովորողների 47%-ը աղջիկներ են, հիմնական դպրոցի սովորողների՝ 47%-ը, ավագ դպրոցի սովորողների՝ 51%-ը[18]: Ընդ որում, 2014 թ. աղջիկների 80.2%-ն է ընդգրկված եղել ավագ դպրոցում, 2018 թ.՝65,7%-ը (տղաների՝ 54.8%-ը)[19]:

Ավագ դպրոցում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշի իջեցումը բացատրվում է ավագ դպրոցների վարկանիշի անկմամբ, որի արդյունքում սովորողների 15.9%-ն ուսումը շարունակում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում[20], որոնք ունեն հանրակրթական ծրագրի պարտադիր բաղադրիչ: Հանրակրթական դպրոցներում աղջիկների ընդգրկվածությունը 2018 թ. եղել է 91.4%՝ 2014 թ. 93.5%-ի դիմաց (ըստ մարզերի կան մեծ տարբերություններ. ամենաբարձրը՝ 98.5%՝ Կոտայքում, ամենացածրը՝ Գեղարքունիքում՝ 85%)[21]:

Գծապատկեր 4. Հանրակրթական պետական և ոչ պետական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018 թ.

[18] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf, էջ 10:
[19] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf, էջ 84:
[20] https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf, էջ 24:
[21] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf, էջ 83:



4-րդ գծապատկերից երևում է, որ բոլոր մարզերում երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական դպրոցներում ՀՀ սառանձնած պարտավորությունների համեմատ ցածր է, թեպետ կան տարբերություններ մարզերի միջև: Բոլոր մարզերում ավելի վաղ աշխատաշուկա մտնելու պատճառով առավել շատ դպրոցից դուրս են մնում տղաները, քան աղջիկները: Առավել բարձր է դուրս մնալու ցուցանիշը ավագ դպրոցում, ինչը ներկայացված է 5-րդ գծապատկերում:

Գծապատկեր 5. Հանրակրթական պետական և ոչ պետական ավագ դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշն ըստ սեռի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018 թ.



Ըստ ՏՏԿԱՀ-ի արդյունքների՝ տարրական (1-4-րդ) դասարաններում երեխաների համախառն ընդգրկվածությունը շատ չի տարբերվում ըստ աղքատության մակարդակի: Միջնակարգ կրթության պայմաններում աղքատության հետևանքով առավել բարձր է երեխաների մաղումը ավագ դպրոցում: Ավագ դպրոցում համախառն ընդգրկվածությունը ոչ աղքատ տնային տնտեսությունների համար կազմել է 74%, աղքատ տնային տնտեսությունների (առանց ծայրահեղ աղքատների) համար՝ 67%, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար՝ 52%[22]:

Անհավասարություն կա կրթության որակի հարցում գյուղի և քաղաքի դպրոցների միջև, ինչը կարող է անմրցունակ դարձնել գյուղի երեխաներին բուհական կրթություն ստանալու առումով: Գյուղի դպրոցներում երեխաների սակավաթիվ լինելու հետևանքով լայն տարածում է գտել «կոմպլեկտավորված դասարաններով» պարապելը, ինչը չի կարող նույն արդյունքն ունենալ, ինչ կանոնավոր դասապրոցեսը: Գյուղի դպրոցներում կա մանկավարժական կադրերի պակաս, ինչը նույնպես իր ազդեցությունն է թողնում կրթության որակի վրա: 2019 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում 2019-2020 ուսումնական տարում հեռավար ուսուցման փորձնական կարգը, որը պետք է նպաստի մասնագետների պակաս ունեցող մարզային դպրոցներում հեռավար կրթության միջոցով բացը լրացնելուն: 2020 թ. կորոնավիրուսի տարածման հետևանքով արտակարգ դրության պայմաններում հանրապետությունում արագացավ անցումը հեռավար ուսուցման, թեպետ նաև մեկ անգամ ևս հաստատվեցին ռեսուրսների մատչելիության տարբերությունները գյուղի և քաղաքի երեխաների համար:

Հանրակրթության ոլորտից կանանց և աղջիկների մաղման պատճառները

Տարբեր են դպրոցից երեխաների դուրս մնալու պատճառները: 2018 թ. ընթացքում 15-17 տարեկան երեխաների 7.8%-ը որևէ ուսումնական հաստատություն չի հաճախել[23]: Պաշտոնական տվյալներով՝ հանրակրթական դպրոցներից դուրս մնացած աշակերտների թվաքանակը 2018/2019 ուստարվա սկզբին եղել է 367, որից աղջիկները՝ 151 (41%): 2013 թ. համեմատությամբ (1070

[22] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 32:
[23] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 32:

երեխա[24]) այդ ցուցանիշը բավականին իջել է: Նրանցից սոցիալ-տնտեսական վատ պայմանների պատճառով դուրս է մնացել 42 աղջիկ, 78 աղջիկ դպրոց չի հաճախել ծնողների արգելքի պատճառով (թույլ չտալու պատճառները պարզ չեն), 9-ը՝ անկարողության, 22-ը՝ մահվան[25]: Դպրոցի բարձր դասարաններից միջնակարգ կրթության պարտադիր լինելու պարագայում սովորողների դուրս մնալը, ինչպես վերը նշվեց, բացատրվում է աղքատության բարձր ցուցանիշներով[26], կրթության ոչ բավարար որակի պայմաններում աշխատաշուկա մտնելուց հետո ծախսերի հատուցման ցածր հավանականությամբ:

Կարևոր դեր ունի այդ հարցում անբարեկարգ միջգյուղական ճանապարհների պայմաններում դպրոցի հեռավորությունը: Կան գյուղեր, որ չունեն միջնակարգ դպրոցներ: Ըստ 2018 թ. հետազոտության տվյալների՝ գյուղաբնակ տնային տնտեսությունների 74.8%-ը պատասխանել է, որ միջնակարգ դպրոցը գտնվում է մինչև 1 կմ հեռավորության վրա: Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 2.5%-ը պատասխանել է, որ այն գտնվում է 4 և ավելի կմ հեռու, այդ թվում՝ 0.1%-ը պատասխանել է, որ մոտակա միջնակարգ դպրոցը գտնվում է ավելի քան 10 կմ հեռավորության վրա[27]: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ հաշվի առնելով Հայաստանի լեռնային պայմանները, գյուղերի միմյանցից կտրվածությունը, ճանապարհը դեպի դպրոց լուրջ փորձություն է դառնում: Այդ ճանապարհը հաճախ ապահով չէ ոչ միայն բնակլիմայական պատճառներով (անանցանելիությունը ձմռան ամիսներին), այլ նույնիսկ ֆիզիկական անվտանգության առումով: Դպրոց չլինելու պատճառով տուժում են և՛ աղջիկները, և՛ տղաները, սակայն դա առավել վատ է ազդում հատկապես աղջիկ երեխաների վրա, քանի որ հենց նրանց են հաճախ անվտանգությունից ելնելով ծնողներն արգելում ոտքով մի գյուղից մյուս գյուղի դպրոցը գնալ: Գյուղական բնակավայրերի սոցիալական ենթակառուցվածքը խիստ խոցելի է նաև երեխաների կրթության բազմազանությունը ապահովելու տեսանկյունից: Չկան

[24] http://www.armstat.am/file/article/soc_12_3-4.pdf, 2013թ.

[25] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf, էջ 20

[26] Մշակման և ներդրման փուլում են «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին», «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին հավանություն տալու մասին», «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծերը:

[27] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 33:

երաժշտական, մարզական, գեղարվեստի, մաթեմատիկական և այլ ուղղվածությամբ դպրոցներ: Տրանսպորտային ոչ պատշաճ հաղորդակցության հետևանքով գյուղի երեխաների համար անհասանելի են քաղաքների նման թեքումով դպրոցները: Ըստ անցկացված հարցազրույցների, հատկապես տուժում են աղջիկները՝ հեռավորությունը կրթական օջախից ավելի լուրջ խոչընդոտ է դառնում նրանց համար: Տղաների դեպքում ազատ տեղաշարժվելու արգելքներ անվտանգության հետ կապված, որպես կանոն, չկան:

Կրթության մատչելիության խնդիր գոյություն ունի հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Միջնակարգ դպրոցները հիմնականում լրացուցիչ պայմաններ և անհրաժեշտ ռեսուրսային բազա չունեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար, թեպետ այդ ուղղությամբ աշխատանք տարվում է: Օրենքով նախատեսված տնային կրթությունը լիարժեք գիտելիքներ չի ապահովում: 2017 թ. համընդհանուր ներառական կրթությունը ներդրվել է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում: Իշխանությունները շարունակում են իրականացնել մինչև 2025 թ. ամբողջական ներառական կրթության անցնելու իրենց հանձնառությունը: Ներառական կրթությունը ենթադրում է հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների համատեղ ուսուցումը համայնքային դպրոցներում: Սակայն, ըստ հետազոտությունների՝ ներառական դպրոցների աճի դինամիկան ցույց է տալիս, որ գործընթացը շատ դանդաղ է առաջ ընթանում[28]: Ավելին, մասնագետների կարծիքով Հայաստանում գործում է ոչ թե ներառական կրթության, այլ ինտեգրված կրթության մոդելը[29]: 2017-2018 ուսումնական տարում ներառական կրթություն իրականացվել է հանրապետության 201 հանրակրթական դպրոցներում, որոնցում սովորել է շուրջ 6225՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխա: Իսկ 2018-2019 ուսումնական տարում ներառական կրթություն իրականացվել է հանրապետության 136 հանրակրթական դպրոցներում, որոնցում սովորել է շուրջ 3330՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխա[30]: Այս ուղղությամբ կարծրատիպերը պահպանվում են, բայց դրանցից առավել տուժում են աղջիկ երեխաները: Որոշ հետազոտությունների ընթացքում արված հարցազրույցները փաստում են, որ «հասարակության անհանդուրժող վերաբերմունքի պատճառով

[28] https://ampop.am/inclusive-education-in-armenia/
[29] http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf
[30] http://www.irtek.am/views/act.aspx?aid=151915

ծնողները հաճախ թաքցնում են իրենց հաշմանդամ երեխաներին շրջապատից՝ սահմանափակելով նրանց շփումները, պատճառաբանելով, որ ամոթ է»[31]:

Դպրոցներից աղջիկների մաղում է տեղի ունենում հատկապես ազգային փոքրամասնությունների համայնքներում (եզդիներ և մալականներ), ինչի վրա 2009 թ. Հայաստանի կառավարության ուշադրությունն է հրավիրել CEDAW կոմիտեն Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր Եզրափակիչ դիտարկումներում[32]: Այդ ուղղությամբ վիճակագրության պակասի հետևանքով դժվար է գնահատել դպրոցից աղջիկների դուրսմղման և վաղ ամուսնությունների տոկոսը: Տարբեր մարզերում, որտեղ ազգային փոքրամասնությունները առավել մեծ թիվ են կազմում, առանձին միջոցառումներ անցկացվում են: Օրինակ՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանում ԱՄՆ և Կանադայի դեսպանատների ֆինանսավորմամբ 2018-2019 թվականներին իրականացրել է «Եզդի կանանց/աղջիկների կրթության իրավունքի խթանում» և «Եզդի աղջիկների և կանանց կրթության իրավունքի պաշտպանությունն Արմավիրի և Արագածոտնի մարզերում բնակչության իրազեկության բարձրացման և ուսուցիչների կարողությունների զարգացման միջոցով» ծրագրերը[33]: ՀՀ մարզերում հասարակական կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվել են ազգությամբ եզդի աշակերտների, մասնավորապես, եզդի աղջիկների՝ հանրակրթությունից դուրս մնալու խնդիրների վերաբերյալ սեմինարներ և քննարկումներ, որոնց մասնակցել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ներկայացուցիչները: Սակայն այդ միջոցառումները հատվածային են, համակարգված բնույթ չունեն: Կարելի ասել, որ այս հարցում պետությունը վարում է խիստ զգուշավոր քաղաքականություն, քանի որ շատ դեպքում ազգային փոքրամասնությունները պետության վարած քաղաքականությունը կարող են ընկալել որպես ազգային խտրականություն՝ վտանգ տեսնելով իրենց ազգային ավանդույթների պահպանման հարցում: Արդյունքում տուժում են կանայք և աղջիկները: Բացի այդ, ազգային փոքրամասնությունների գյուղական դպրոցներում նույնպես կա կրթության որակի խնդիր:

Հանրապետությունը 2019 թ. դեռևս չի հասել հանրակրթության ոլորտում 2015 թ. համար իր իսկ վերցրած պարտավորություններին: Կրթությունից

[31] Կրթության մատչելիության գենդերային ասպեկտները, 2014 թ., էջ 24:
[32] https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?docid=52dd05e94
[33] http://www.irtek.am/views/act.aspx?aid=151508, էջ

երեխաների դուրս մնալու պատճառները տարբեր են՝ ընտանիքի դիրքորոշումը, սոցիալական անապահովությունը և երեխաների ներգրավումը գյուղատնտեսական և կենցաղային աշխատանքներում, երեխայի հաշմանդամությունը, միգրացիան, վատ առաջադիմությունը և մոտիվացիայի բացակայությունը: Կրթությունից դուրս մնալը տարբեր հետևանքներ է ունենում կանանց և տղամարդկանց համար: Աղջիկների դեպքում մեծանում է վաղ ամուսնության, հետագայում կրթությունը չշարունակելու, ամուսնուց կամ այլ հարազատից տնտեսական կախվածություն ունենալու վտանգը: Երկիրը երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառով կորցնում է իր քաղաքացիների ներուժը լիարժեք օգտագործելու հնարավորությունը:

Մասնագիտական կրթություն

Նախնական մասնագիտական կրթություն: 2018-2019 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 46 պետական ուսումնական հաստատություններ: Ուսանողների թվաքանակը կազմել է 6723, որոնց 27.1%-ը կանայք են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 99.2%-ը, իսկ վճարովի՝0.8%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 6.7% (կանանց՝ 3.9%, տղամարդկանց՝ 9.2%), սեռային հավասարության ցուցանիշը[34]՝ 0.42[35]: Աղջիկների փոքր ընդգրկվածությունը նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում մի կողմից բացատրվում է դրանց ոչ այնքան բարձր վարկանիշով (այդ նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններ սովորաբար ընդունվում են ավելի ցածր առաջադիմությամբ երեխաները), մյուս կողմից՝ հասարակությունում «կանացի» համարվող մասնագիտությունների պակասով: Բացի այդ, փոքր տարիքի աղջիկների համար ծնողները գերադասում են, որ նրանք սովորեն իրենց համայնքի դպրոցում, քան ամեն օր գնան որևէ այլ համայնք թեկուզև ուսումնառության նպատակով: Տղաների դեպքում այդպիսի արգելքներ չկան:

Ըստ մասնագիտությունների ընտրության՝ աղջիկների և տղաների միջև մեծ տարբերություններ կան: Ինչպես երևում է ստորև ներկայացված 6-րդ գծապատկերում, աղջիկները համեմատաբար շատ են թեթև արդյունաբերության (87%) ու արվեստի և դիզայնի (65%) մասնագիտությունների ոլորտներում:

Գծապատկեր 6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ուսանողներն ըստ մասնագիտական ուսուցման ոլորտի և սեռի, 2018/2019

[34] Սեռային հավասարության ցուցանիշը տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցն է:
[35] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_4.pdf էջ 1:

ուսումնական տարի



Աղջիկների թվաքանակը ավելի փոքր է մյուս բոլոր ոլորտներում՝ սպասարկում (48%), էկոնոմիկա և կառավարում (38%), ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա (37%), պարենամթերքի արտադրություն (23%), օգտակար հանածոների արդյունահանում (23%), շինարարություն և կենցաղային տնտեսություն (12%), գյուղատնտեսություն (6%): Ընդհանրապես չկան աղջիկներ հետևյալ մասնագիտական ոլորտներում՝ տրանսպորտային միջոցներ, անտառային պաշարների վերարտադրություն և վերամշակում, ռադիոէլեկտրոնային տեխնիկա և հեռահաղորդակցություն, մեքենաշինական սարքավորումներ և տեխնոլոգիաներ, էներգետիկա[36]: Այդ մասնագիտությունների գծով աշխատաշուկայի պահանջարկը ավելի մեծ է:

Միջին մասնագիտական կրթություն: Հանրապետության միջին մասնագիտական 93 պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ) 2018/2019 ուսումնական տարում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 11.7% (կանանց՝ 13.1%, տղամարդկանց՝ 10.4%), սեռային հավասարության ցուցանիշը՝ 1.26[37]:

Գծապատկեր 7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներն ըստ մասնագիտական ուսուցման ոլորտի և սեռի, 2018/2019 ուսումնական տարի

[36] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_4.pdf էջ 12
[37] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_5.pdf, էջ 1:



Ինչպես երևում է 7-րդ գծապատկերից, աղջիկները մեծ թիվ են կազմում հետևյալ ոլորտներում՝ առողջապահություն և սպորտ (78%), իրավագիտություն (77%), արդյունաբերություն և շինարարություն (65%), մանկավարժություն (63%), արվեստ և կինեմատոգրաֆիա (60%), տնտեսագիտություն (50%) ոլորտներում: Անհամեմատ ցածր տոկոս են կազմում աղջիկները գյուղատնտեսության (18%), տրանսպորտի և կապի (9%) ոլորտներում[38]: 2009 թ. համեմատությամբ աղջիկների թիվը ավելացել է իրավագիտության (2009 թ. եղել է 47.6%, 2019 թ.՝ 77%) և նվազել մանկավարժության (2009 թ. 81.7%-ից նվազել է 63%-ի 2019 թ.) ոլորտում: Մյուս բոլոր մասնագիտական ոլորտներում փոփոխությունները աննշան են:

Բարձրագույն կրթություն: 2018-2019 ուսումնական տարում հանրապետության 56 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ (բուհ) և 12 մասնաճյուղեր բարձրագույն կրթության **առաջին աստիճանում** իրականացրել են մասնագիտական կրթություն բակալավրի ծրագրերով: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 52.2% (կանանց՝ 56.6%, տղամարդկանց՝ 48.2%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.17[39]:

2018-2019 ուսումնական տարում հանրապետության 32 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ ու 9 մասնաճյուղեր և 4 գիտական կազմակերպություններ բարձրագույն կրթության

[38] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_5.pdf, էջ 14
[39] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf, էջ 1:

երկրորդ աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն մագիստրոսի ծրագրերով: Այդ կազմակերպություններում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 14.1% (կանանց՝ 19.4%, տղամարդկանց՝ 8.9%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 2.19[40]:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ոչ աղքատ տնային տնտեսությունների համախառն ընդգրկվածությունը կազմել է 39%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսություններինը՝ 26% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններինը՝0%[41]:

Ինչպես և նախորդ մակարդակներում աչքի են զարնում ոչ թե գենդերային տարբերությունները, այլ աղքատության հետ կապված սոցիալական կարգավիճակի տարբերությունները:

Կան գենդերային տարբերություններ մասնագիտությունների ընտրության հարցում:

Գծապատկեր 8. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ըստ որոշ մասնագիտական ուսուցման ոլորտների սովորող կանայք և աղջիկների տոկոսը ուսանողների համաթվում, 2008/2009 - 2018/2019 ուսումնական տարիների համեմատությամբ



Գծապատկերից երևում է, որ վերջին 10 տարվա ընթացքում մաթեմատիկական գիտությունների, քիմիայի և արվեստի գծով աղջիկների տոկոսը աճել է: Վիճակագրական գրքույկներում մասնագիտական ոլորտների

[40] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf էջ22
[41] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf, էջ 32:

անվանումների միջև տարբերությունը թույլ չտվեց համեմատել տվյալները բոլոր մասնագիտությունների գծով, սակայն 2018/2019 ուսումնական տարվա տվյալներով կարելի է ասել, որ աղջիկները մեծամասնություն են կազմել բանասիրության ոլորտում (96%), արվեստում (88%), կենսաբանության (87%), քիմիայի, լրագրություն և տեղեկատվական գիտությունների (80%) ոլորտներում: Նվազել է աղջիկների թիվը կրթության ոլորտում (63%), չի փոխվել առողջապահության ոլորտում (55%), սոցիալական և վարքաբանական գիտություններում (55%): Սակայն ավելի քիչ են աղջիկները ընտրել այնպիսի մասնագիտական ոլորտներում, ինչպիսիք են՝ մաթեմատիկա և վիճակագրություն (48%), գործարարություն և վարչարարություն (46%), հումանիտար գիտություններ (43%), իրավունք (40%), շրջակա միջավայր (29%), տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (28%), անասնաբուժություն (22%), անվտանգության ծառայություններ (16%), արդյունաբերություն և տեխնոլոգիա (24%), ճարտարապետություն և շինարարություն (21%), ճարտարագիտություն (6%), գյուղատնտեսական գիտություններ 0[42]:

Այսպիսով, թեպետ բարձրագույն կրթության ոլորտում կանանց ընդգրկվածությունն ավելի բարձր է, քան տղամարդկանցը, սակայն գենդերային խտրազատումը (սեգրեգացիա) ըստ մասնագիտությունների մնում է, և կանայք նախկինի պես դուրս են մղվում բարձր աշխատավարձ ապահովող և եկամտաբեր ոլորտներից:

Մասնագիտական կողմնորոշման գենդերային ուղղորդում: Կանանց համար մասնագիտական-տեխնիկական պատրաստման (TVET), գիտության և տեխնիկայի ոլորտում կրթության և անընդհատ կրթության մատչելիության ընդլայնում

Մասնագիտական ուղղորդում: Մասնագիտական ուղղորդումն իրականացվում է հիմնական դպրոցում, ավագ դպրոցում, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Դպրոցներում դասղեկների կողմից, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների կողմից անցկացվում են մասնագիտական կողմնորոշման պարապմունքներ: «Դաստիարակչական աշխատանքը

[42] https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf, էջ 2:

դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ» օժանդակ ձեռնարկում կա խորհրդատվություն դասղեկների համար, այդ թվում՝ ուղղված սեռի հատկանիշով կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը: Սակայն դրանց արդյունավետության գնահատում չի արվել, և այդ պարապմունքները մեծապես կախված են մանկավարժների համոզմունքներից, նրանց մոտ գենդերային կարծրատիպերի առկայությունից: Այդ պատճառով մասնագիտական գենդերային ուղղորդումը արդյունավետ չէ, և խտրազատումը ըստ մասնագիտությունների պահպանվում է:

Կրթության շարունակելիություն: 2018 թ. ցուցանիշով մագիստրատուրայի և հետբուհական կրթության մակարդակներում կանանց տոկոսն ավելի բարձր է եղել, քան տղամարդկանցը: Այսպես, մագիստրատուրա ընդունվածների 63.7%-ը կանայք են, ավարտածների՝ 66.2%-ը, ասպիրանտների կազմում նույն ցուցանիշները համապատասխանաբար եղել են՝ 52,4% և 38,8%, դոկտորանտներինը, համապատասխանաբար, 54.5% (և՛ ընդունվածները, և՛ ավարտածները)[43]:

Գծապատկեր 9. Կանանց և տղամարդկանց բաշխվածությունը, մագիստրատուրայում և հետբուհական մակարդակներում %



[43] https://www.armstat.am/file/article/gender_2019.pdf, էջ 53:

Գծապատկերից հստակ երևում է, որ մագիստրատուրայում, ասպիրանտուրայում ընդունվածների թվում գերակշռում են կանայք, սակայն ասպիրանտուրայի մակարդակից սկսած ավելի շատ ավարտում են տղամարդիկ: Ասպիրանտուրա ընդունված և ավարտած կանանց թվի տարբերության հիմնական պատճառը ընտանիքում կրկնակի ծանրաբեռնվածությունն է:

Գծապատկեր 10. Դոկտորանտուրայում կանանց և տղամարդկանց համամասնությունը, 2008-2018 թթ.,%



Վերջին տարիներին դոկտորանտուրա ընդունված և ավարտած կանանց թիվը կրկնապատկվել է: Սակայն դա դեռ չի նշանակում, որ ավարտելուց հետո նրանք պաշտպանում են դոկտորական ատենախոսությունը: Կանայք առաջվա պես կենտրոնացած են գիտության «կանացի» ոլորտներում:

Գիտատեխնիկական աշխատանքների գենդերային տեսանկյունները: Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող և գիտական աստիճան ունեցող մասնագետ-հետազոտողների թվում կա գենդերային ճեղքվածք՝ եթե գիտությունների թեկնածուների թվում կանայք կազմում են 48.3%, ապա գիտությունների դոկտորների կազմում թիվը կտրուկ նվազում է՝ 21.5%[44]:

[44] https://www.armstat.am/file/article/gender_2019.pdf, էջ 54:

Գծապատկեր 11. Գիտական աստիճան ունեցող կանանց շարժընթացը 2008-2018 թթ. [45]



Հայաստանում պետական մակարդակով անընդհատ կրթության համակարգ մշակված չէ: Կադրերի հետբուհական վերապատրաստման համակարգը չի համապատասխանում պահանջմունքներին, թեպետ նախատեսվում են, բայց դեռևս չեն իրականացվում դեկրետային արձակուրդից վերադարձող երիտասարդ կանանց վերապատրաստման ծրագրեր աշխատանքի շուկա վերադարձը հեշտացնելու և նրանց մրցունակության հնարավորություններն ընդլայնելու նպատակով: Ներկայումս ներդրվում է դայակի ինստիտուտը, որը պետք հեշտացնի կանանց մուտքը աշխատաշուկա, սակայն ծրագիրը նոր է, և արդյունքները դեռ չեն երևում: ՀՀ Կառավարության 2018 թ. հունիսի 8-ի նիստում հաստատվել է «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ծրագրի իրականացման կարգը»: ՓՄՁ ԶԱԿ-ը Ասիական զարգացման բանկի (ADB) հետ համատեղ իրականացնում է «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը՝ կազմակերպելով վերապատրաստումներ և իրականացնելով մենթորության ծրագրեր[46]: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաստատել է երիտասարդ մայրերին աշխատաշուկայում օժանդակող ծրագիր, որի սահմաններում մինչև 30 տարեկան կանայք, որոնք մասնագիտական կրթություն

[45] https://www.armstat.am/file/article/gender_2019.pdf

[46] https://smednc.am/media/2019/10/09/f1f65c5523ced8f229c7775abbb715f9e52e14f8.pdf

չեն ստացել, պետք է անցնեն 6-ամսյա վերապատրաստում և անցնեն աշխատանքի:

Շարունակական ծրագրերով կանանց առաջընթացին ավելի շատ նպաստում են կանանց ՀԿ-ները, որոնք պարբերաբար կազմակերպում են առաջնորդության դպրոցներ, գենդերային թեմատիկայով սեմինարներ, սակայն վերջին տարիներին դրամաշնորհային ծրագրերի ուղղվածության փոփոխման հետ կապված նմանատիպ ծրագրերը նվազել են:

Կրթական բոլոր մակարդակների ծրագրերում գենդերային հավասարությանն ուղղված բաղադրիչի ներառում, գենդերային կարծրատիպերից զերծ դասագրքերի, ուսումնառության նյութերի, գենդերային բռնության նկատմամբ անհանդուրժողականություն ձևավորող թեմատիկայի մշակում և ներդնում:

Հանրակրթական դպրոցում, որը մեծ դեր ունի քաղաքացու աշխարհայացքի ձևավորման գործում, գենդերային զգայուն մոտեցումներ ինտեգրված չեն: Կրթության բովանդակության, դասագրքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք մնում են առնակենտրոն, չեն նպաստում գենդերային զգայուն աշխարհայացքի ձևավորմանը[47]:

Թեև գենդերային գիտելիքների հիմունքների դասավանդման ուսումնամեթոդական հիմքի ստեղծման ուղղությամբ՝ հանրակրթության պետական չափորոշչում հասարակագիտական բլոկի առարկաներին ներկայացվող նվազագույն պահանջներում կարևորվել է գենդերային հավասարության և հասարակության մեջ սեռային խտրականության բացառումը, սակայն դրանք դեռևս դպրոցում չեն ներդրվել:

Հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչը, ծրագիրը, 8-րդ դասարանի դասագիրքը և ուսուցչի ձեռնարկը փորձաքննվել են գենդերային կարծրատիպերի, գենդերային անհավասարությանը վերաբերող նյութերի վերհանման և բացառման տեսանկյունից, մշակվել և ներկայացվել են առաջարկություններ: Ուսումնական գրականության գենդերային փորձաքննության անցկացման չափանիշների ստեղծման ուղղությամբ փորձագիտական խմբի կողմից իրականացվել է տարրական դպրոցի «Այբբենարան», «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և

[47] «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց, ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, 2015:

շրջակա աշխարհը», «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Երաժշտություն» առարկաների հիմնական և այլընտրանքային դասագրքերի գենդերային փորձաքննություն:

Դասագրքերում ներկայացված բոլոր հերոսները՝ պատմական, առասպելական, հեքիաթների, պատմությունների, բացառապես արական սեռի են: Սակայն այդ ուղղությամբ դեռևս բարելավում չկա: Հանրապետության ներկայացումը հեղինակները իրականացնում են բացառապես տղամարդ հերոսների տեսքով՝ անտեսելով գոնե ժամանակակից կին հերոսներին՝ սպորտի չեմպիոններ և այլն: («Ես և շրջակա աշխարհը», 4), նկ. 4[48]: Պատմության դասագրքերում արական սեռի են կերպարների 94%-ից ավելին, հայ գրականության՝ 80%-ը[49]:

Ավագ դպրոցի «Հայոց պատմության» դասագրքերում քանակապես տղամարդկանց կերպարները մոտ 30 անգամ գերազանցում են կանանց կերպարները: Կանանց կերպարները կազմում են բոլոր կերպարների ընդամենը 3%-ը:

Տղամարդկանց պատկերող նկարները 7 անգամ գերազանցում են կանանց պատկերող նկարները: Որպես կանոն, տղամարդկանց պատկերող նկարները ասոցացվում են իշխանության, ուժի, տիրապետության հետ: Արդյունքում՝ սովորողների գիտակցության մեջ ձևավորվում է միայն ակտիվ, նվաճող, պաշտպանող, ստեղծագործող տղամարդու կերպարը: Կարծիք է ձևավորվում, թե կանայք մշակույթում որևէ ներդրում չեն ունեցել և չունեն: Կանայք հիշատակվում են միայն այն դեպքում, երբ հանդես են գալիս տղամարդուն՝ հայրենիքի պաշտպանին հատուկ գործառույթներով:

Գենդերային դասընթացներ են դասավանդվում միայն ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում, ԵՊՀ որոշ ֆակուլտետներում և մի քանի այլ բուհերում շահագրգիռ դասախոսների ջանքերով: Ընդ որում, այս ոլորտում երկիրը հետընթաց է ապրել, քանի որ 2005-2006 թթ. 12 բուհերում և 32 դպրոցներում դասավանդվել են գենդերային դասընթացներ, մշակվել են «Պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքները գենդերային կրթության ոլորտում», և փորձարկվել են «Գենդերային կրթության պետական չափորոշիչների նախագծերը»: «Դասավանդման ապահովման համար մշակվել և

[48] Նույն տեղում, էջ 23:
[49] Օսիպով, Սարգիզովա, 2015:

հրատարակվել են ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, գիտական նյութերի և հետազոտությունների ժողովածուներ: «Գենդեր և տնտեսագիտություն», «Գենդեր և լրագրություն» ուսումնական փաթեթները ՀՀ կրթության և գիտության նախարարությունը երաշխավորել է որպես ուսումնական ձեռնարկ բուհերի համար: Ստեղծվել է «Գենդերային գիտելիքների դասեր» մեթոդական փաթեթը հանրակրթական դպրոցի համար[50]:

Գենդերային թեմատիկայով գիտական հետազոտությունների անցկացման ուղղությամբ նույնպես պլանավորված և համակարգված աշխատանքներ չեն տարվում: ՀՀ ԳԱԱ թեմատիկ հետազոտությունների ցանկում գենդերային հետազոտությունները ներառված չեն: Սակայն ԵՊՀ-ում շարունակում է գործել «Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը»:

Արդյունքում՝ կրթական համակարգը նպատակաուղղված չէ սովորողների և ուսանողների կողմից գենդերային հավասարության նորմերի և սկզբունքների ընկալմանը, գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, ավելին, այն նպաստում է այդ կարծրատիպերի անընդհատ վերարտադրմանը:

Գենդերային զգայունությանն ուղղված ուսուցիչների և կրթության ոլորտում աշխատող այլ մասնագետների համար վերապատրաստման դասընթացների անցկացում

Հանրապետությունում անընդհատ պրոցես է հանրակրթական դպրոցների ուսուցիչների և տնօրենների, ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենների տեղակալների վերապատրաստումը: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտը մշակել էր «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը» թեմայով վերապատրաստման փաթեթը, որը կարող դրվել կրթության ոլորտի մասնագետների համար անցկացվող վերապատրաստումների հիմքում: Գենդերային կարծրատիպերին, հավասարությանն ու հանդուրժողականությանը, գենդերային քաղաքականությանը վերաբերող թեմաները ընդգրկվել են հանրակրթական դպրոցների փոխտնօրենների, դասղեկների, սոցիալական մանկավարժների, հոգեբանների

[50] Պեկինի Գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների, Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014, էջ 73, http://aawue.am/change/uploads/2014/07/PEKIN-FINAL-1.pdf

վերապատրաստման ծրագրերում: Սակայն այդ ուղղությամբ որևէ ուսումնասիրություն չի արվել, և արդյունավետությունը չի գնահատվել:

Կանանց և աղջիկների համար տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու համար անվտանգ և ներառական պայմանների ապահովում, թվային և այլ հեռանկարային ոլորտներում, հատկապես STEM ոլորտում կարողությունների և հմտությունների ձեռքբերումն ապահովող հնարավորությունների ստեղծում

2015 թ. պարզվեց[51], որ Հայաստանի աշակերտների արդյունքները, մասնավորապես, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ստուգատեսներում, 2003 թ. համեմատությամբ վատթարացել են և հետ են մնում միջազգային միջին ցուցանիշից (սահմանված է 500 միավոր): 2015 թ. Հայաստանի 8-րդ դասարանի աշակերտների 21%-ի արդյունքները ցածր են եղել 2015-ի՝ TIMSS-ով սահմանված արդյունքային նվազագույն մակարդակից, մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունում և Ղազախստանում այդ մակարդակին չեն հասել աշակերտների, համապատասխանաբար, ընդամենը 5%-ը և 2%-ը[52]: TIMSS-ի արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր երկրներում երեխաների հաջողությունները կախված են ծնողների, դպրոցի սոցիալ-տնտեսական կարգավիճակից (ՍՏԿ): Ցուցանիշների անկումը անհանգստություն առաջացրեց երկրում, և այդ ուղղությամբ որոշակի աշխատանք ծավալվեց: Մինչ այդ ուղղությամբ լուրջ անհանգստություն չկար, քանի որ ավանդաբար հայ տաղանդավոր երեխաները միջազգային օլիմպիադաներին «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» և «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից մեդալներ էին շահում[53]: Բայց այլ բան է տաղանդավոր երեխաների առկայությունը, այլ բան է դպրոցների միջին մակարդակը:

2015 թվականի մարտի 30-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՏՀՏ ոլորտը ներկայացնող 3 խոշոր՝ «Վիվասել ՄՏՍ», «Սինոփսիս Արմենիա», «Յունիքոմփ» ընկերությունների միջև կնքվեց փոխըմբռնման հուշագիր, համաձայն որի հանրակրթական 5 ավագ դպրոցներում մեկնարկեց նոր ծրագիր՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ»,

[51] 2019 թ. արդյունքները դեռ հրապարակված չեն:
[52] Սոցիալական արդարությունը՝ Հայաստանի կրթության համակարգում, էջ 5:
[53] ՀՀ ԿԳՆ 2015 թ. տարեկան հաշվետվություն:

«Հեռահաղորդակցության հիմունքներ» և «Միկրոէլեկտրոնիկա» առարկաների ներդրմամբ[54]:

«Դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» միջոցառման արդյունքում 2019 թ. տվյալով ՀՀ բոլոր մարզերում գործում են 284 ինժեներական լաբորատորիաներ և ռոբոտաշինական խմբակներ: Ծրագրում ընդգրկված է 7500 սովորող: ՀՀ Կառավարության որոշմամբ՝ ծրագիրն իրականացնող Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը ևս 284 ինժեներական լաբորատորիա ներդնելու նպատակով տրամադրվել է շուրջ 835 մլն ՀՀ դրամ[55]: Ծրագրի իրականացման փուլում պետք է կիրառվեր գենդերային զգայուն մոտեցում: Ծրագիրը պետք է նպաստի աղջիկների և կանանց հմտությունների բարձրացմանը և STEM-ի գիտելիքներին, ինչպես նաև հեշտացնի նրանց մուտքը աշխատաշուկա, ներկայումս ՏՀՏ ոլորտում աշխատող մասնագետների մեծ մասը տղամարդ են (63%): Ներկայումս Հայաստանում գործում է շուրջ 500 տեղեկատվական տեխնոլոգիաների ստարտափներ և ընկերություններ:

STEM աշխատատեղերը կենտրոնացած են հետևյալ ոլորտներում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, շինարարություն, հանքարդյունաբերություն, գիտահետազոտական ինստիտուտներ, էլեկտրամատակարարում: Ոլորտի գործատուները, օրինակ՝ «Սինոփսիսը», գործընկերային աջակցություն են ցույց տալիս STEM ուղղվածության որոշ բուհերի, աջակցում գիտահետազոտական ծրագրերին՝ հեշտացնելով ուսանողների մուտքը աշխատաշուկա: Նույնն անում են հանքարդյունաբերական ոլորտի որոշ ընկերություններ:

Աստիճանաբար ավելանում է ոչ ֆորմալ և արտադասարանական STEM ծրագրերի թիվը. դա հիմնականում ապահովում են «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնները՝ Երևանում և մի քանի մարզկենտրոններում[56]:

Հայաստանում ՏՏ ոլորտում կանանց ներգրավվածությունը համարվում է ոչ ցածր՝ 30%, սակայն այն պոտենցիալ աճի հնարավորություն ունի, եթե վերանան այս ոլորտում առկա արգելքները: Ըստ հետազոտությունների՝ STEM ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններին և

---

[54] ՀՀ ԿԳՆ 2015 թ. տարեկան հաշվետվություն:
[55] ՀՀ ԿԳՄՄՆ 2019 թ. հաշվետվություն: http://escs.am/am/news/5899
[56] http://documents.worldbank.org/curated/en/512861495789491335/pdf/ACS21924-ARMENIA-PUBLIC-ArmeniaGenderandSTEMFINALArmenian.pdf, էջ 44:

ելքային արդյունքներին խոչընդոտող գործոններն են՝ անհավասար հասանելիություն (գյուղական շրջաններում որակյալ կրթություն ստանալու անհավասար հնարավորությունը, STEM ուղղվածությամբ մասնավոր ավագ դպրոցների, որոնց որակը ավելի բարձր է, ուսման բարձր վարձավճարները), տեղեկատվական անհամաչափությունը (STEM մասնագիտացում ստանալն ու կարիերան այդքան էլ բարձր վարկանիշ չունեն Հայաստանում), ինստիտուցիոնալ թերացումները (եթե տղաներն ընդունվում են անվճար համակարգ, տարկետում են ստանում պարտադիր զինվորական ծառայությունից, արդյունքում՝ STEM ոլորտներում ավելի մեծ թիվ են կազմում կրթաթոշակ ստացող տղաները): Իրենց բացասական ազդեցությունն են ունենում նաև գենդերային կարծրատիպերը: Բացասական դեր է խաղում նաև կազմակերպություններում կառավարման ոլորտում առկա ուղղահայաց խտրազատումը (STEM ոլորտի կազմակերպություններում տեխնիկական և մասնագիտական կարիերայում ներգրավված են տղամարդիկ, կանայք, ընդհանուր առմամբ, միջին օղակի պաշտոններ են զբաղեցնում, կանայք ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ): Թեպետ երկիրը խոսքով կարևորում է STEM ուղղվածությունը, սակայն լայնամասշտաբ տեղեկատվություն չի տարածվում՝ ոլորտներում կանանց հաջողությունների վերաբերյալ[57]: Չկան պետական օժանդակ ծրագրեր, որոնք հնարավորություն կտան համատեղելու ընտանեկան պարտականությունների կատարումը և ոլորտում աշխատանքը (ճկուն գրաֆիկների սահմանում, օժանդակության ծրագրեր ոլորտում աշխատող երիտասարդ մայրերին և այլն):

Կրթության ոլորտի աշխատողների մեծ մասը կանայք են, և դա նպաստեց նրան, որ 2020 թ. կորոնավիրուսի դեմ պայքարի համատեքստում մտցված արտակարգ դրությունը, ուսումնական հաստատություններում օնլայն հարթակներում վերապատրաստման անցկացման պահանջը ստիպեց կարճ ժամանակահատվածում դրանք անցնել և տիրապետել դասավանդման նոր տեխնոլոգիաների:

Կրթության ոլորտում որոշումների կայացման մակարդակում կանանց մասնակցության բարձրացում: Կրթության ոլորտում աշխատողների մոտ 80%-ը կանայք են, սակայն ոլորտում որոշումների կայացման բոլոր մակարդակներում կանայք փոքրամասնություն են կազմում: ՀՀ ԿԳՆ աշխատակազմում կանայք

[57] http://documents.worldbank.org/curated/en/512861495789491335/pdf/ACS21924-ARMENIA-PUBLIC-ArmeniaGenderandSTEMFINALArmenian.pdf, էջ 41:

նույնպես մեծամասնություն են կազմում, սակայն զբաղեցնում են գենդերային բուրգի ստորին և միջին հատվածները միայն:

Գծապատկեր 12. ՀՀ ԿԳՆ աշխատակազմը 2009-2019 թթ.



2020 թ. կա իրավիճակի բարելավում, այսպես, ՀՀ ԿԳՄՄՆ կազմում կրթության ոլորտում աշխատող նախարարի հինգ տեղակալներից երկուսը կանայք են, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետի տեղակալը և երկու բաժնի վարիչները կանայք են, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության երկու բաժնի վարիչներից մեկը կին է, հանրակրթության վարչության պետի տեղակալը և երկու բաժնի վարիչները կանայք են:

Ստորև ներկայացված գծապատկերները ցույց են տալիս կանանց և տղամարդկանց համամասնությունը պետական բուհերի ռեկտորների և պրոռեկտորների, դեկանների և ամբիոնների վարիչների կազմում (բացարձակ թվերով)[58]:

Գծապատկեր 13. Պետական բուհերի ռեկտորների և ուսումնագիտական գծով պրոռեկտորների գենդերային կազմը

[58] Տվյալները ներկայացված են ըստ https://www.armstat.am/file/article/gender_10.pdf, https://www.armstat.am/file/article/kanajq_ev_txamardik.pdf, https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf վիճակագրական նյութերի:



Գծապատկեր 14. Պետական բուհերի դեկանների գենդերային կազմը



Գծապատկեր 15. Պետական բուհերի ամբիոնների վարիչների գենդերային կազմը



Պետական բուհերում որոշումների կայացման մակարդակում գերակշռում են տղամարդիկ, ոչ պետական բուհերում պատկերը մի փոքր այլ է, դրանցում

որոշումների կայացման մակարդակում կանայք ավելի շատ են: Բայց դա բացատրվում է նրանով, որ այդ բուհերում ազդեցության ոլորտները ավելի սահմանափակ են, իսկ աշխատավարձը՝ ավելի ցածր:

Այսպիսով, թեպետ կրթության ոլորտի աշխատակիցների գերակշիռ մասը կանայք են, սակայն որոշումները հիմնականում ընդունվում են տղամարդ պաշտոնյաների կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ օրենսդրությունում, իրավանորմատիվային փաստաթղթերում ամրագրված է սեռի սկզբունքով խտրականության արգելքը, անկախ սեռից անվճար միջնակարգ կրթության պարտադիր լինելը, մրցութային կարգով մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալը, մրցութային կարգով հետբուհական կրթության իրավունքը: Գենդերային խտրականությունը դե յուրե բացակայում է:
2. Թեպետ օրենսդրական մակարդակում կրթության ոլորտում խտրականությունը բացակայում է, սակայն կա գենդերային թաքնված խտրականություն, որը պայմանավորված է գենդերային կարծրատիպերով, ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց ավանդական դերերով, անձի կամ ընտանիքի սոցիալ-տնտեսական, առողջական վիճակով, ազգային փոքրամասնություններին պատկանելությամբ:
3. Կրթության ոլորտում ընդունվող ծրագրերը գենդերային ուղղորդում չեն անցնում, հաճախ դրանք գենդերային կույր են, ինչը բացասաբար է ազդում ոլորտի զարգացման վրա: 2015-2018 թթ. պետական գենդերային ռազմավարության բացակայությունը բացասական հետևանքներ է ունեցել:
4. Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում շատ ցածր է (31.6%, ընդ որում, քաղաքներում՝ 36.5%, գյուղերում՝ 22.6%): 2020 թ. տվյալներով՝ Հայաստանում ավելի քան 171 հազար երեխա կամ երեխաների 70%-ը մանկապարտեզ չի հաճախում: Ըստ սեռի տարբերությունները մեծ չեն (աղջիկների ընդգրկվածությունը 33.6% է) և, որպես կանոն, համապատասխանում են տարիքային խմբերի համամասնությանը, սակայն մեծ

տարբերություններ կան ըստ մարզերի, քաղաք-գյուղ և ընտանիքի սոցիալական վիճակի տեսանկյունից: Նախադպրոցական հաստատությունների բացակայության պայմաններում մեծապես տուժում են կանայք:

5. Դրական է, որ 2015 թ.-ից հետո միջնակարգ կրթությունը դարձավ պարտադիր: Սակայն հանրապետությունը 2019 թ. դեռևս չի հասել հանրակրթության ոլորտում 2015 թ. համար իր իսկ ստանձնած պարտավորություններին, և բոլոր մակարդակներում, հատկապես բարձր դասարաններում, կան կրթությունից դուրս մնացած երեխաներ: Կրթությունից երեխաների դուրս մնալու պատճառները տարբեր են՝ ընտանիքի դիրքորոշումը, սոցիալական անապահովությունը և երեխաների ներգրավումը աշխատաշուկայում (առավել ևս, որ կրթության ցածր որակի պատճառով ծնողները հույս չեն ունենում, որ կրթության վրա արված ծախսերը հետագայում կփոխհատուցվեն), հաշմանդամությունը, միգրացիան, վատ առաջադիմությունը և մոտիվացիայի բացակայությունը: Միջնակարգ կրթությունից դուրս մնալը տարբեր հետևանքներ է ունենում կանանց և տղամարդկանց համար: Աղջիկների դեպքում մեծանում է վաղ ամուսնության, հետագայում կրթությունը չշարունակելու, ամուսնուց կամ այլ հարազատից տնտեսական կախվածություն ունենալու վտանգը: Երկիրը երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառով կորցնում է իր քաղաքացիների ներուժը լիարժեք օգտագործելու հնարավորությունը:

6. Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում աղջիկների թիվն ավելի փոքր է, քան տղաներինը: Դա բացատրվում է մի քանի հանգամանքներով. բարձր առաջադիմությամբ աղջիկները նախընտրում են կրթությունը շարունակել բուհերում, քանի որ բարձրագույն կրթության դիպլոմի վարկանիշը ավելի բարձր է, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կենտրոնացումը քաղաքներում, այսինքն՝ սովորելու համար աղջիկ երեխաները պետք է ամեն օր դուրս գան իրենց բնակավայրից, իսկ դա չի խրախուսվում ծնողների կողմից, աղջիկների համար աշխատանքի տեղավորվելու շանսերը ավելի մեծ են բարձրագույն կրթության դեպքում, նույնիսկ եթե այդ աշխատանքի համար բարձրագույնի որակավորում պետք չէ: Մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգի ոչ

լիարժեք ներդրումը խոչընդոտ է հանդիսանում կրթության շարունակելիության ապահովման համար:

7. Թեպետ բարձրագույն կրթության ոլորտում կանանց ընդգրկվածությունը ավելի բարձր է, քան տղամարդկանցը, սակայն գենդերային խտրազատումը ըստ մասնագիտությունների մնում է, և կանայք առաջվա պես կենտրոնացած են «կանացի» մասնագիտություններում՝ հետագայում փոքրացնելով բարձր աշխատավարձ և եկամուտներ ստանալու հնարավորությունները:
8. Հայաստանում պետական մակարդակով անընդհատ կրթության համակարգ ներդրված չէ: Կադրերի հետբուհական վերապատրաստման համակարգը չի համապատասխանում կանանց պահանջմունքներին, թեպետ նախատեսվում են, բայց դեռևս չեն իրականացվում դեկրետային արձակուրդից վերադարձող երիտասարդ կանանց վերապատրաստման ծրագրեր աշխատանքի շուկա վերադարձը հեշտացնելու և նրանց մրցունակության հնարավորություններն ընդլայնելու նպատակով:
9. Կրթական համակարգը նպատակաուղղված չէ սովորողների և ուսանողների կողմից գենդերային հավասարության նորմերի և սկզբունքների ընկալմանը, գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, ավելին՝ այն նպաստում է այդ կարծրատիպերի անընդհատ վերարտադրմանը: Դասագրքերի, այլ ուսումնական նյութերի միջոցով սովորողների մտածելակերպում ամրապնդվում է ակտիվ, ուժեղ, նվաճող, բարձունքների հասնող տղամարդու և տնային աշխատանք կատարող հոգատար կին և մայր հանդիսացող, հանրային ոլորտում, պատմության մեջ որևէ դերակատարում չունեցող կնոջ կերպարը:
10. Միջնակարգ դպրոցում, նախնական և միջին մասնագիտական և ուսումնական հաստատություններում գենդերային դասընթացներ չեն վարվում, դրանք պահպանվել են շատ քիչ բուհերում:
11. Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական աճի տեսանկյունից կա հստակ ձևավորված հորիզոնական և ուղղահայաց խտրազատում, ինչը մասնագիտական կողմնորոշման թուլության, դրանում գենդերային բաղադրիչի ներդրման անարդյունավետության արդյունք է:
12. Գլոբալ շուկայում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում STEM ոլորտը, որով Հայաստանի ցուցանիշները բավական ցածր են: Այդ ոլորտում կա

կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և ելքային արդյունքների մեծ տարբերություն: Խոչընդոտող գործոններն են՝ STEM ոլորտի դպրոցների անհավասար հասանելիությունը, հատկապես գյուղական դպրոցներում դասավանդման թուլությունը, STEM մասնագիտությունների պահանջվածության վերաբերյալ անբավարար քարոզչությունը, ինստիտուցիոնալ թերացումները (եթե տղաներն ընդունվում են անվճար համակարգ, տարկետում են ստանում պարտադիր զինվորական ծառայությունից, արդյունքում՝ STEM ոլորտներում ավելի մեծ թիվ են կազմում կրթաթոշակ ստացող տղաները): Իրենց բացասական ազդեցությունն են ունենում նաև գենդերային կարծրատիպերը: Բացասական դեր է խաղում նաև կազմակերպություններում կառավարման ոլորտում առկա ուղղահայաց խտրազատումը:

13. Ուսուցիչների, դասղեկների, դպրոցների, ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների վերապատրաստման ծրագրերում ներդրվել է գենդերային բաղադրիչ, բայց այն չի անցկացվել գենդերային փորձագետների կողմից, ձևական բնույթ է կրել, այդ իսկ պատճառով արդյունավետությունը ցածր է եղել:
14. Կանանց կրկնակի ծանրաբեռնվածության, գենդերային կարծրատիպերի, ապակյա առաստաղի ֆենոմենի հետևանքով կանանց մասնագիտական առաջընթացի, մասնագիտական-տեխնիկական պատրաստման, կրթության անընդհատության հնարավորությունները ավելի սահմանափակ են և հնարավոր չէ այդ խնդիրը առանց հատուկ ծրագրերի լուծել:
15. Կրթության ոլորտի որոշումների կայացման մոդելը տիպիկ գենդերային բուրգի մոդելն է, երբ աշխատողների մեծ մասը կանայք են, սակայն որոշումների կայացման գլխավոր պաշտոններում տղամարդիկ են:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման մոնիթորինգը անցկացնել գենդերային փորձագետների ներառմամբ:

2. Անհրաժեշտ է գենդերային բաղադրիչը ներառել պետության կողմից ֆինանսավորվող գիտական հետազոտությունների թեմատիկայում, նախատեսել ՀՀ ԳԱԱ հումանիտար ինստիտուտներում բյուջետային ֆինանսավորմամբ գենդերային հետազոտությունների իրականացում:
3. Քանի որ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ) հանրապետությունում շարունակաբար իրականացնելու է քոլեջների և բուհերի հավատարմագրում և նախատեսվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների վերանայում, անհրաժեշտ է հավատարմագրման չափանիշներում (3-րդում՝ Մասնագիտական կրթական ծրագրեր, 4-րդում՝ Ուսանողներ, 6-ում՝ Հետազոտություն և զարգացում) ավելացնել գենդերային չափորոշիչը, որը կնպաստի բուհերի մասնագիտական կրթական ծրագրերում գենդերային բաղադրիչի ներառմանը:
4. Հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական գործընկերության շրջանակում կարելի է նախատեսել որոշ միջոցառումների պատվիրակում: Դա հնարավորություն կտա համակարգել ոչ ֆորմալ ոլորտի կրթական միջոցառումները՝ դրանք դարձնելով առավել նպատակային:
5. Նոր մշակվող կրթության չափանիշները, չափորոշիչները, ուսումնա-մեթոդական փաթեթները, դասագրքերի նախագծերը պետք է գենդերային ուղղորդում անցնեն: Գործողները անհրաժեշտ է ենթարկել գենդերային փորձաքննության: Քանի որ դասագրքերը փոխելը ծախսատար է, կարելի է փոքրիկ գրքույկներով «գենդերային զգայուն» հավելվածներ ստեղծել:
6. Մասնագիտական կողմնորոշման ծրագրերը պետք է լինեն գենդերային զգայուն, այդ պատճառով այդ ոլորտով զբաղվող բոլոր պատասխանատուները պետք է անցնեն գենդերային մոդուլներով վերապատրաստում: Կողմնորոշման ծրագրերում աղջիկների համար անհրաժեշտ է նախատեսել իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների ուժեղ կողմերի ներկայացում, հատկապես STEM մասնագիտությունների, և մոտիվացիայի ձևավորում:
7. Ապահովել հանրակրթական դպրոցների, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի գենդերային փորձաքննություն, գենդերային մոդուլներով վերապատրաստմանը ներգրավել գենդերային փորձագետների:

8. Բարձրացնել հանրակրթության ոլորտի բոլոր կառույցների հաշվետվողականության աստիճանը համակարգից դուրս եկած երեխաների և ուսումը չշարունակելու նրանց դրդապատճառների վերաբերյալ՝ հետևողականություն ցուցաբերելով այդ երեխաների հետագա ճակատագրի հարցում:
9. Հասարակության մեջ լայնորեն քննարկումներ ծավալել STEM բնագավառներում ուսման և կարիերայի օգուտների շուրջ, խրախուսել աղջիկներին խորացնել իրենց հետաքրքրվածությունը մաթեմատիկայով և բնագիտական առարկաներով և դպրոցական աղջիկներին ներկայացնել STEM մասնագիտություններով աշխատող կանանց դրական դերային օրինակներ:
10. ՀՀ ԿԳՄՄՆ-ի, մարզային և համայնքային կառույցների ուշադրությունը հրավիրել հեռավար ուսուցման, էլեկտրոնային ուսուցման, խառը ուսուցման ծրագրերի վրա, դրանց համադրմամբ լուծել դպրոց, մանկավարժներ չունեցող բոլոր գյուղական համայնքների երեխաների կրթության որակի պահովման խնդիրը:
11. Առավել համակարգված աշխատանք տանել ազգային փոքրամասնությունների շրջանում՝ աղջիկների կրթության վերաբերյալ:
12. Արագացնել նախադպրոցական հաստատությունների ստեղծման նոր մոդելի տարածումը:
13. Հստակեցնել դպրոցներից դուրս մնացող երեխաների վերաբերյալ վիճակագրությունը և հատուկ հետազոտություններ անցկացնել Հայաստանում կրթության մատչելիության վերաբերյալ:
14. Հստակ և հասկանալի վիճակագրություն վարել STEM ոլորտի վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

- Պահանջել և իրականացնել կրթության ոլորտը կարգավորող օրենքների՝«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների գենդերային

ուղղորդումը՝ ավելացնելով նաև սեռի սկզբունքով խտրականության արգելքն ու խտրականության բնորոշումը:

- Պահանջել և իրականացնել կրթության ոլորտին վերաբերող բոլոր օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի գենդերային ուղղորդումը:
- Պահանջել կրթության ոլորտին վերաբերող սեռի սկզբունքով տարանջատված վիճակագրության համակարգումը և տրամադրումը օրենքների քննարկումների և տարեկան բյուջետային քննարկումների ընթացքում:

***

ՄԱՍ 2. ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝

ԿԱՆԱՅՔ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պեկինի Գործողությունների ծրագրում «Կանայք և զինված հակամարտությունները» բաժնում ամրագրված ռազմավարական նպատակներն են՝

1. Կանանց մասնակցության ընդլայնում հակամարտությունների կարգավորման գործում որոշումների ընդունման մակարդակներում և այն կանանց պաշտպանություն, որոնք գտնվում են զինված և ուրիշ հակամարտությունների գոտում կամ օտարերկրյա օկուպացիայի պայմաններում:
2. Ռազմական չափից ավելի ծախսերի կրճատում և սպառազինության առկայության հսկողություն:
3. Հակամարտությունների կարգավորման ոչ բռնի ձևերի քարոզչություն և կոնֆլիկտային իրավիճակներում մարդու իրավունքների խախտումների դեպքերի թվի կրճատում:
4. Խաղաղության մշակույթի քարոզչության գործում կանանց ավանդի ընդլայնման օժանդակություն:
5. Պաշտպանություն, օգնություն և մասնագիտական պատրաստություն փախստական, տեղահանված, միջազգային պաշտպանության կարիք ունեցող և երկրի ներսում տեղահանված կանանց համար:
6. Օգնություն գաղութներում և չինքնակառավարվող տարածքներում գտնվող կանանց:

Ստորև ներկայացվում է վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանի իրականությանը վերաբերող՝ զինված հակամարտությունների կանխարգելման և հաղթահարման գործում կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության ձեռքբերումների և համակարգային խնդիրների ընդհանուր գնահատականը: Ներկայացվում են նաև առաջարկություններ՝ բարձրացնելու կառավարության և օրենսդրական մարմնի գործողությունների արդյունավետությունը:

<u>ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ</u>

<u>ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ</u>

<u>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ</u>

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Վերջին հինգ տարվա ընթացքում, հատկապես 2018-2020 թվականներին, այն բանից հետո, երբ Հայաստանում տեղի ունեցան ժողովրդավարական փոփոխություններ, ազգային կառավարությունը ճանաչեց և ընդունեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» խնդիրը որպես գենդերային հավասարության իր օրակարգի առաջնահերթություն:

Որպես այս բնագավառի նշանակալի նվաճում կարելի է նշել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի[59] (Հայաստանի Կառավարության 2019 թ. փետրվարի 28-ի N197-Լ

Տեղեկանք հիմնավորում

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը ՀՀ Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» խորագրով 1325 բանաձևը անդրադառնում է կանանց նկատմամբ զինված հակամարտությունների ազդեցությանը, զինված հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և խաղաղաշինության գործընթացին կանանց ներգրավմանը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 ազգային Ծրագիրը մշակվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության 2017-2019 թթ. ազգային ռազմավարությունից բխող ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 483-Ն որոշման N 1 հավելվածի 76-րդ կետի համաձայն:

2016 թ. նոյեմբերին Հայաստանը Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեից ստացավ հանձնարարական, որում ասվում է. «Ավարտել և ընդունել գործողությունների ծրագիր՝ ԱԽ 1325 (2000) բանաձևն իրագործելու նպատակով՝ համագործակցելով կանանց կազմակերպությունների հետ»: Հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առկայությունը, այդ թվում՝ Հայաստանի սահմանամերձ շրջաններում հակամարտության ազդեցությունը կրած կանանց իրավիճակը, նման Ծրագրի ընդունումը հնարավորություն կտա Հայաստանին ավելի մեծ ուշադրություն դարձնելու այս հատվածում բնակվող խոցելի խմբերի կարիքներին:

Գործողությունների ծրագրի առկայությունը ոչ միայն կհամակարգի այս ոլորտում նախկինում իրականացվող աշխատանքները, այլ նաև հնարավորություն կընձեռի ստանալ ֆինանսական օժանդակություն թե՛ տարբեր երկրներից և թե՛ ՄԱԿ-ի 1325 բանաձևի համար ստեղծված հատուկ հիմնադրամից:

Վերոհիշյալ Ծրագիրն ունենալու դեպքում միջազգային հարթակում կբարձրացվի ՀՀ կշիռը՝ որպես կանանց դերի և խաղաղության ամրապնդման համար պայքարող երկրի:

[59] http://peacewomen.org/countries_and_regions/393

որոշում) դրույթների իրականացման համար առաջին գործողությունների ազգային ծրագրի մշակումն ու ընդունումը:

Գործողությունների ազգային ծրագիրը (ԳԱԾ) մշակելու համար վարչապետի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N1014-Ա որոշմամբ հիմնվեց միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմի մեջ մտան բոլոր ոլորտային նախարարությունների և գործակալությունների ներկայացուցիչներ: Այսպիսով, Հայաստանը դարձավ ԳԱԾ ընդունած ՄԱԿ-ի անդամ պետություններից 80-երորդը:

Հայաստանի ԳԱԾ-ը հաշվի է առնում առկա իրադրությունը՝ նպատակ ունենալով խթանել խաղաղաշինության, հակամարտությունների կանխարգելման և կարգավորման համատեքստում կանանց քաղաքական մասնակցությունը և տնտեսական հզորացումը, ինչպես նաև ընդգծում է խաղաղապահ ու մարդասիրական առաքելություններում և հետկոնֆլիկտային վերականգնման գործընթացներում կանանց ներգրավման կարևորությունը: Ուշադրության կենտրոնում են հատկապես բնակչության խոցելի խմբերը, ներառյալ՝ սահմանամերձ համայնքներում բնակվող կանայք, հակամարտության անմիջական ներգործությունը կրած կանայք, տեղահանված կամ տեղահանման սպառնալիքի տակ գտնվող կանայք և այլն:

Այս կարևոր փաստաթուղթը առանձնակի ուշադրություն է դարձնում կանանց մասնակցության բարձրացմանը և կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկության խթանմանը պաշտպանական համակարգում (զինված ուժերում, ոստիկանությունում և խաղաղապահ առաքելություններում): ԳԱԾ-ը նաև հատուկ շեշտադրում է զինված հակամարտության ներգործությունը կրած կամ դրա հետևանքով տեղահանված կանանց և աղջիկների հատուկ կարիքներին անդրադարձող համապարփակ ծրագրերի ստեղծումը: ԳԱԾ-ը բովանդակում է բաղադրիչներ, որոնք վերաբերում են «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի միջազգային իրագործմանը՝ հատկապես հաշվի առնելով ընթացող Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը:

Միևնույն ժամանակ փաստաթուղթը կոնկրետ հաստատում է, որ Հայաստանը դիտում է ԳԱԾ-ը «որպես ազգային մեխանիզմ՝ հասարակական կյանքն ընդգրկող ոլորտներում կանանց իրավունքների պաշտպանության և առաջխաղացման համար»: Ըստ էության, ընդհանուր համատեքստում թիվ 1325 բանաձևի իրականացումը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ

կենտրոնանալու այն կարևոր կապի վրա, որն առկա է կանանց հզորացման և խաղաղության ու զարգացման կայունության միջև: Այս առաջնահերթությունները հաստատուն ձևով փոխկապակցված են և նպաստում են Կայուն զարգացման թիվ 5 և թիվ 16 նպատակների իրագործմանը, որոնք բովանդակում են կանանց, խաղաղությանը և անվտանգությանը առնչվող հանձնառություններ՝ միտված կանանց մասնակցության բարձրացմանը հանրային կյանքում, թե՛ տեղական և թե՛ ազգային ու տարածաշրջանային մակարդակներում:

Թիվ 1325 բանաձևի վերաբերյալ Հայաստանի ԳԱԾ-ը խարսխված է չորս հիմնասյուների վրա՝ կանխարգելում, պաշտպանություն, մասնակցություն, օժանդակություն և վերականգնում, ու ներառում է 18 կոնկրետ նպատակ և նաև մշտադիտարկում:

ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2000 թվականին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իր «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևով ճանաչեց, որ պատերազմը ներգործում է կանանց վրա ուրույն կերպ:

Այն ընդգծեց խաղաղ կարգավորման բանակցություններում կանանց մասնակցության բարձրացման անհրաժեշտությունը:

1992 թվականից մինչև 2011 թվականը խաղաղ կարգավորման բանակցությունների մասնակից բանագնացների 9 տոկոսը կանայք էին:

Գործողությունների ազգային ծրագրի մշակման և իրականացման համակարգումը վերապահվեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը: ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1325 բանաձևի իրականացման նպատակով գործողությունների ազգային ծրագրի մշակման համար ստեղծվեց միջգերատեսչական

հանձնաժողով (վարչապետի N 1014-Ա համապատասխան որոշումը կայացվել է 2017 թ. սեպտեմբերի 13-ին), որն ընդգրկում էր ներկայացուցիչներ ՀՀ վարչապետի աշխատակազմից, ՀՀ արտաքին գործերի նախարարությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, ՀՀ ոստիկանությունից, ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության Ազգային ինստիտուտից, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայությունից և Հայկական կարմիր խաչի ընկերությունից: Ինչպես երևում է ցանկից, ԳԱԾ-ի մշակման գործընթացներում ներգրավված 12 մասնակից մարմիններից միայն Հայկական կարմիր խաչի ընկերությունն է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպություն է: Սա դիտվում է որպես բացթողում՝ հաշվի առնելով այն նշանակալի դերը և ներդրումը, որ հասարակական կազմակեպություններն ունեցել են Հայաստանում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը խթանելու գործում՝ ԳԱԾ-ի ընդունումից առաջ, թե հետո:

Այդ նույն դիտարկումը վերաբերում է նաև Գործողությունների ազգային ծրագրի իրականացման մի քանի կետերի. սահմանված նպատակների կեսի դեպքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հիշատակվում են որպես համակատարողներ միայն «համաձայնությամբ»: Օրինակ՝ հասարակական կազմակերպությունները չեն ներառված որպես համակատարողներ 2-րդ նպատակի դեպքում, այն է՝ «պետական մարմինների, կանանց հասարակական կազմակերպությունների և հակամարտության ներգործությանը ենթարկված կանանց միջև համագործակցության խթանում՝ հակամարտությունների կանխարգելման, խաղաղաշինության և կարգավորման հարցերով», ինչը, մեր կարծիքով, ճիշտ մոտեցում չէ նման կոնկրետ նպատակի իրականացման նկատմամբ:

Այլ կերպ ասած, քաղաքացիական հասարակության կառույցների թերներկայացվածությունը ԳԱԾ-ի իրականացման հարցում և այս ուղղությամբ նրանց ծավալուն փորձը և փորձագիտությունը չօգտագործելը, մեր կարծիքով, կարող է նվազեցնել պլանավորված գործողությունների արդյունավետությունը ծրագրի հաջող իրականացման համար:

Ծրագրի վերաբերյալ մեկ այլ դիտարկում առնչվում է «արդյունքային ցուցանիշներին», որոնք որոշ դեպքերում հստակ չեն ձևակերպված, դժվար չափելի են և հաշվի չեն առնում միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը: Ցանկալի կլիներ նաև, որ լիներ ավելի համապարփակ և մանրամասն մշտադիտարկման ծրագիր:

Սակայն Գործողությունների ազգային ծրագրի հետ կապված ամենամեծ մտահոգությունը պետական բյուջեից ֆինանսավորման բացակայությունն է. ԳԱԾ-ը չի պարունակում հատկացված բյուջե կամ նախահաշիվ: Ակնհայտ է, որ առանց լուրջ ֆինանսական միջոցների ներգրավման դժվար է ակնկալել գործողությունների բարձր արդյունավետություն և նշանակալի արդյունքներ:

Հարկ է ընդգծել սակայն, որ վերոհիշյալ բոլոր նկատառումները և դիտողությունները որևէ կերպ չեն նսեմացնում Գործողությունների ազգային ծրագրի կարևորությունը և նշանակալիությունը, որի ընդունումը, փաստորեն, պետական մարմինների, կանանց ոչ կառավարական և իրավապաշտպան կազմակերպությունների և խաղաղության ջատագով քաղաքացիական ակտիվիստների գործադրած համատեղ ջանքերի արդյունք է՝ այնպիսի միջազգային կազմակերպությունների էական աջակցությամբ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԵՄ-ը, ԵԱՀԿ-ը և այլ կառույցներ:

Միևնույն ժամանակ, «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» խնդիրը չպետք է սահմանափակվի միայն ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1325 բանաձևի վերաբերյալ Գործողությունների ազգային ծրագրի ընդունմամբ և հետագա իրականացմամբ: Մեր կարծիքով, կարևոր է «կանայք, խաղաղություն և անվտանգություն» խնդրի վերաբերյալ հանձնառությունները ինտեգրել առանցքային ազգային և միջգերատեսչական քաղաքականության մեջ և արտացոլել դրանք համապատասխան փաստաթղթերում, պլանավորման և մշտադիտարկման գործընթացներում: Սակայն, այդ կարևոր հարցը չի գտել իր տեղը ոչ վերջերս ընդունված Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրում[60], ոչ էլ 2007 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության անվտանգության ռազմավարության[61] մեջ: Այնուամենայնիվ, մենք հույս ունենք, որ վերջինիս նոր տարբերակի մեջ, որը մշակման փուլում է, այս հարցերը կներառվեն որպես ազգային անվտանգության

[60] http://www.irtek.am/views/act.aspx?aid=151906strategy
[61] https://www.mfa.am/filemanager/Statics/Doctrineeng.pdfsecurity

առաջնահերթություններ, ինչպես առաջարկվել է մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից:

Կանանց առաջնորդությունը, ներկայացվածությունը և մասնակցությունը

Վերջին հինգ տարվա ընթացքում և, հատկապես, թավշյա հեղափոխությունից հետո (2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներ) բարձրացվել է կանանց դերը հակամարտության պարբերաշրջանի բոլոր փուլերում, խաղաղապահ գործընթացներում, խաղաղաշինությունում և այլ մարդասիրական առաքելությունների, ինչպես նաև հետկոնֆլիկտային վերականգնողական գործողությունների ընթացքում: Թիվ 1325 բանաձևին վերաբերող Գործողությունների ազգային ծրագրի ընդունումը թույլ է տալիս Հայաստանին անդրադառնալ երկրի համար հատուկ կարևորություն ունեցող մի շարք խնդիրների: Այդ խնդիրները ներառում են ուշադրություն կենտրոնացում սահմանամերձ համայնքներում բնակվող կանանց տնտեսական ու սոցիալական զարգացման վրա, տեղահանված կանանց ու աղջիկներին հատուկ պաշտպանության տրամադրում, խաղաղապահ առաքելություններում կանանց ներգրավման խթանում, կանանց իրավունքների պաշտպանություն, նրանց քաղաքական մասնակցության խթանում և այլն:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի ԳԱԾ-ը նաև պարունակում է բաղադրիչներ, որոնք վերաբերում են «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի իրականացման միջազգային գործընթացներին, ինչը հատկապես կարևորվում է Լեռնային Ղարաբաղի ընթացող հակամարտության առումով: Թեպետ բանակցային գործընթացը, որը միջնորդավորված է ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից, որոշ լավատեսություն է ներշնչում այս հակամարտության ոչ բռնի, խաղաղ կարգավորման հանդեպ, դժբախտաբար, այսօր Հայաստանը կանգնած է ռազմական գործողությունների վերսկսման ռիսկի առջև, ինչը կարող է հանգեցնել միջնորդական ջանքերի ձախողմանը և ռազմականացման էսկալացիայի: 2016 թվականի ապրիլին հակամարտությունը կրկին վերսկսվեց՝ զոհեր պատճառելով երկու կողմին էլ, և ավարտվեց հրադադարի ռեժիմով՝ քառօրյա լարված ռազմական դիմակայությունից հետո:

Այս էսկալացիան և ԼՂ հակամարտությունն ընդհանուր առմամբ ունեցել են հստակ գենդերային դրսևորումներ՝ ներգործելով կանանց կյանքի վրա թե՛ հանրային և թե՛ մասնավոր ոլորտներում: Այս առումով «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի խթանմանը միտված

Հայաստանի Կառավարության ջանքերը թվում են լիովին արդարացված, ժամանակին և համապատասխանում են առկա մարտահրավերներին:

Այստեղ պետք է նշել, որ ԼՂ հակամարտության վերաբերյալ պաշտոնական բանակցությունները տեղի են ունենում Հայաստանի վարչապետի (մինչև 2018 թվականը՝ ՀՀ նախագահի) և Ադրբեջանի նախագահի ու երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ: Պաշտոնական մակարդակում բանագնացները հիմնականում տղամարդիկ են, կանանց ներկայացվածությունը խաղաղ կարգավորման գործընթացներում ընդհանուր առմամբ տեխնիկական փորձագետների և դիտորդների մակարդակով է եղել: Բարձրաստիճան դիվանագիտական բանակցությունների գործընթացը ինքնին ընդգրկում է խիստ սահմանափակ թվով մարդկանց և չի ներառում կանանց: Միևնույն ժամանակ կանանց հասարակական կազմակերպությունները և խաղաղ կարգավորման կին քաղաքացիական ջատագովները եղել են առաջատար դիրքերում՝ պահանջելով վերջ դնել ռազմական գործողություններին և խաղաղություն հաստատել, ինչպես նաև ներգրավված են եղել հակամարտության կարգավորման խթանմանը միտված հանդիպումներում և քննարկումներում, սակայն ավելի շատ՝ ոչ ֆորմալ մակարդակով:

Այս համատեքստում Հայաստանը հատուկ նշանակություն է տալիս հակամարտության կանխարգելմանը, հակամարտության կարգավորմանը և խաղաղաշինությանը կանանց իմաստալի մասնակցության ապահովմանը, ինչպես նաև կանանց իրավունքների խթանմանը և բռնություններից նրանց պաշտպանությանը:

Ընդունված ԳԱԾ-ից բխող այս և այլ պարտավորությունների իրականացման համար պետական գործակալությունները և տեղական հասարակական կազմակերպությունները՝ որոշ միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ, վերջին երկու տարվա ընթացքում կատարել են մի շարք կոնկրետ քայլեր ազգային և տեղական մակարդակներում: Մանավորապես՝

Պաշտպանության նախարարություն

Մի շարք նախաձեռնություններ են իրականացվել՝ միտված կանանց մասնակցության խթանմանը որոշումների կայացման և քաղաքականության մշակման բնագավառներում, ինչպիսիք են, օրինակ՝ պաշտպանական

համակարգում կանանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման ուղեցույցները ու գործողությունների ծրագիրը: Այս ուղեցույցները շեշտադրում են պաշտպանական համակարգում կանանց ներգրավման և իմաստալի մասնակցության հնարավորությունների ստեղծման կարևորությունը որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդիականացման նախապայման:

Մի շարք հանդիպումներ ու քննարկումներ են կազմակերպվել հասարակության տարբեր խմբերի մասնակցությամբ, որոնք նպատակաուղղված են եղել որոշումների կայացմանը կանանց հավասար մասնակցության խթանմանը և կին զինծառայողների կարևոր դերի ընդգծմանը: Նաև իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված ՀՀ զինված ուժերում կանանց իրավունքների պաշտպանությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Իրականացվել են որոշ կարևոր գործողություններ, որոնք թիրախավորել են կանանց ներգրավվածությունը զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում, ներառյալ այն ստորաբաժանումները, որոնք մասնակցում են խաղաղապահ առաքելություններում: Օրինակ՝ 2017 թվականին պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադի շրջանակներում կանանց ստորաբաժանում էր ձևավորվել: Կին խաղաղապահների առաջին խումբը ներգրավված էր 2018 թ. Կոսովոյում իրականացվող խաղաղապահ առաքելության մեջ հայկական ջոկատի կազմում:

ՀՀ զինված ուժերի խաղաղապահ առաքելությունում ներգրավված անձնակազմի համար իրականացվել են կարողությունների զարգացման և իրազեկության բարձրացման որոշ միջոցառումներ հետևյալ թեմաներով՝ կանանց իրավունքներ, զինված հակամարտությունների ներգործությունը կանանց վրա և կանանց ներգրավվածությունը զինված հակամարտությունների կանխարգելմանը, կարգավորմանը ու խաղաղաշինությանը:

Ռազմական կրթության հաստատությունների կին շրջանավարտների համար կազմակերպվել են հատուկ դասընթացներ կանանց առաջնորդության և սոցիալ-հոգեբանական ադապտացիայի վերաբերյալ: Կատարվել են կին զինծառայողների կարիքների գնահատում, ինչպես նաև գենդերային խտրականության տեսակների նույնականացում:

Ոստիկանություն

ՀՀ ոստիկանության որդեգրած քաղաքականության արդյունքում ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում ծառայող և ավագ պաշտոններ զբաղեցնող կանանց թիվը շարունակ աճում է: Այսպես, ներկայումս 19 կին աշխատակից զբաղեցնում են ղեկավար պաշտոններ ՀՀ ոստիկանությունում. ոստիկանապետի տեղակալ՝ 1 կին, վարչության պետ՝ 1, ընդհանուր բաժնի պետի տեղակալ՝ 1, վարչության պետի տեղակալ՝ 4, բաժնի պետ՝ 8, ամբիոնի վարիչ՝ 1, դոցենտ՝ 3: Նաև 65 կին աշխատակից զբաղեցնում են ավագ խմբի պաշտոններ: Ըստ ոստիկանության ծառայությունների՝ պատկերը հետևյալն է. ճանապարհային ոստիկանություն՝ 7 կին, հասարակական կարգ՝ 185, անչափահասների գործեր և ընտանիքում բռնության կանխարգելում՝ 77, օպերատիվ-հետախուզական՝ 36, պետական պահպանություն՝ 94, ոստիկանություն՝ 77 կին:

Կին ուսանողների թիվը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում աճել է. 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում կրթահամալիր ընդունված կին ուսանողների թիվը 62 էր, իսկ 2019-2020 ուսումնական տարում՝ 64:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2019 թվականի մայիս-հունիս ամիսներին նախաձեռնվել է 10 այց շրջաններ, ներառյալ՝ սահմանամերձ շրջանների խոցելի համայնքները: Շրջանային այցերի շրջանակում քարտեզագրվել են կանանց խնդիրները, առանձնացվել են շրջաններում, հատկապես, սահմանամերձ համայնքներում բնակվող կանանց հուզող խնդիրները, և ներկայացվել են նախարարության կողմից իրականացված ծրագրերն ու միջոցառումները:

Քարտեզագրված խնդիրները ամփոփվել են և ներկայացվել Երևանում 2019 թ. հուլիսի 16-ին տեղի ունեցած համաժողովում, որին մասնակցել են պետական կառույցների, քաղաքացիական հասարակության և բացահայտված սեկտորալ խնդիրներով հետաքրքրվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ավելի ուշ, աշխատանքային գործընթացի շրջանակներում վերհանված խնդիրները քննարկվել են համապատասխան պատասխանատու գործակալությունների հետ:

Նաև ծրագրված է իրականացնել սահմանամերձ համայնքներում բնակվող կանանց կարիքների գնահատում հակամարտության սոցիալ-տնտեսական պատկերը ստանալու համար: Այս առումով, ՀՀ արտաքին գործերի

նախարարությունը (ԱԳՆ) մշակել է կարիքների գնահատման նախնական հայեցակարգը, որի իրականացման համար նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատան հետ համապատասխան ֆինանսական օժանդակություն տրամադրելու վերաբերյալ:

2019 թ. դեկտեմբերի 4-ին Երևանում տեղի ունեցավ «Կանանց դերը խաղաղության հաստատման հարցում. հնարավորություններ և մարտահրավերներ». միջազգային համաժողովը՝ փորձ փոխանակելու և դասեր քաղելու «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» հարցի շուրջ զարգացումներից, ինչպես նաև ընդհանուր եզրեր գտնելու հակամարտության փոխակերպման և խաղաղաշինության բնագավառում ավելի արդյունավետ համագործակցության համար պետական մարմինների, տեղական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների միջև: Հայաստանի վարչապետի տիկին Աննա Հակոբյանը մասնակցեց համաժողովին՝ ներկայացնելով իր «Կանայք հանուն խաղաղության» նախաձեռնությունը, ինչին հաջորդեցին քննարկումները:

Հասարակական կազմակերպություններ

2019 թ. հուլիսին «Ժողովրդավարությունն այսօր» հասարակական կազմակերպությունը գումարեց իր 7-րդ միջազգային համաժողովը «Կանայք խաղաղության սեղանի շուրջ. ավելի շատ արդարություն բոլորի համար» խորագրով: Համաժողովին մասնակցեցին կին խաղաղարարներ և իրավապաշտպաններ տարբեր երկրներից, Հայաստանում հավատարմագրված դեսպանատների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Քննարկվեցին կանանց համար արդարադատության հասանելիության ապահովման հետ կապված խնդիրներ, ինչպես նաև ուսումնասիրվեցին բանակցային գործընթացում կանանց մասնակցության հնարավոր մեխանիզմները:

2018 թվականին «Հասարակություն առանց բռնության» կազմակերպությունը, գործակցելով Կին խաղաղարարների համաշխարհային ցանցի հետ, մշակեց ուսումնական մոդուլ «Գործողությունների ծրագրի մշակում՝ կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգով», որի նպատակն էր նպաստել Հայաստանում ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1325 բանաձևի վերաբերմամբ Գործողությունների ազգային ծրագրի ստեղծմանը և իրագործմանը: Այս ուսումնական մոդուլը, որը պարունակում է համապարփակ

տեսական և գործնական տեղեկություններ, ինչպես նաև հղումներ այլ աղբյուրների, մշակված է այն դասընթացավարների համար, որոնք ցանկանում են իրենց ներդրումն անել Հայաստանում ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1325 բանաձևի և «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի արդյունավետ իրականացմանը:

2018-2019 թվականներին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտեն ԼՂ-ում տեղակայված Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացրեց «Երկխոսություն հանուն խաղաղության և զարգացման. կանանց տեսակետ» նախագիծը: Նախագիծը նպաստեց քաղաքացիական խաղաղաշինական նախաձեռնությունների խթանմանը հակամարտության ներգործությանը ենթարկված ԼՂ սահմանամերձ համայնքներում և Հայաստանի հարավում՝ ներգրավելով և մոտիվացնելով տեղական երիտասարդ կանանց դառնալ խաղաղության ջատագովներ, և խթանեց համագործակցություն և սիներգիա նախագիծն իրականացնողների և Հայաստանի ու ԼՂՀ-ի այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների միջև:

Ի լրումն այս ուղղությամբ հասարակական կազմակերպությունների ծրագրերի վերոհիշյալ օրինակների՝ հարկ է նշել նրանց ներգրավվածությունը և նշանակալի ներդրումը տարածաշրջանային ու համաշխարհային խաղաղաշինության ծրագրերին, որոնք նախաձեռնվել են այսպիսի միջազգային մինչկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են ՄԱԿ-ի Կանայք, ԵԱՀԿ-ը, ԵՄ-ը, Համաշխարհային գործընկերությունը հանուն զինված հակամարտությունների կանխարգելման (GPPAC), Կին խաղաղարարների համաշխարհային ցանցը (GNWP), Քվիննա թիլ Քվիննա հիմնադրամը և այլն: Այսպիսով, հաջողությամբ համագործակցելով իրենց գործընկերների հետ, Հայաստանի մի շարք կանանց և իրավապաշտպան կազմակերպություններ իրականացրել են կարևոր համատեղ ծրագրեր՝ նպատակաուղղված քաղաքացիական երկխոսությանը՝ անկախ բաժանարար գծերից, վստահության ամրապնդմանը և հակամարտությունների էսկալացիայի կանխարգելմանը՝ նպաստելով «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի խթանմանը ոչ միայն Հարավային Կովկասում և դրա սահմաններից դուրս, բայց նաև ազգային և տեղական մակարդակներում:

Դատական և ոչ դատական հաշվետվողականությունը միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների ու զինված և այլ հակամարտությունների պայմաններում

Հայաստանի օրենսդրությունը չի սահմանում որևէ հատուկ մեխանիզմ զինված և այլ հակամարտությունների ժամանակ կանանց ու աղջիկների մարդու իրավունքների խախտումներին արձագանքելու համար: Այս իրավիճակները կարգավորվում են այս ոլորտի ընդհանուր օրենքների և կանոնադրությունների շրջանակներում: Սակայն վերջին երկու տարվա ընթացքում ի կատարումն Գործողությունների ազգային ծրագրի 8-րդ նպատակից (Հակամարտությունների ընթացքում կանանց և աղջիկների պաշտպանության ապահովում՝ բռնությունից) և 9-րդ նպատակից (ԼՂ հակամարտության ներգործությանը ենթարկված կանանց և աղջիկների իրավունքների ապահովում) բխող պարտավորությունների՝ պետական գործակալությունները իրականացրել են մի շարք գործողություններ, որոնցից մի քանիսը նշված են ստորև:

Ոստիկանություն

2019 թ. փետրվարին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության նախաձեռնությամբ միջազգային և տեղական ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում կազմակերպվել են դասընթացներ ոստիկանության սպաների համար: Դասընթացներն անդրադառնում էին գենդերային բռնության և կանանց նկատմամբ խտրականության հարցերին:

Արտակարգ իրավիճակների նախարարություն

2019 թվականին, համաձայն ՀՀ Կառավարության 2015 թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» որոշման, նախարարությունը, համագործակցելով տեղական իշխանությունների հետ, քաղաքացիական պաշտպանության ծառայողների համար կազմակերպեց պարապմունքներ, որոնք բաղկացած էին հատուկ մարտավարական վարժություններից և դասախոսություններից: Պարապմունքները շարունակական են: Պարապմունքների ընթացքում հատուկ

ուշադրություն է դարձվել կանանց ու աղջիկների պաշտպանությանը հակամարտությունների ընթացքում:

2020 թվականին հետազոտություն կկատարվի պաշտպանական կառույցների տեխնիկական, անվտանգային և նորմատիվ պահանջների վերաբերյալ, ինչպես նաև անդրադարձ կարվի Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակիչներին, մանկապարտեզներն ու դպրոցները ապաստարանով ապահովելուն և նոր ապաստարաններ հիմնելու խնդրին:

Արդարադատության նախարարություն

Նախարարությունը առաջարկել էր ՀՀ արդարադատության ակադեմիային ներառել «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» հարցը 2020 թվականի առարկայական դասընթացների մեջ՝ դատավորների, քննիչների, դատախազների, դատավորների թեկնածուների, քաղաքացիական ծառայողների, Քննչական կոմիտեի պետական աշխատակիցների, պետական ծառայողների և դատական կատարածուների համապատասխան պատրաստման համար: Հաշվի առնելով այս առաջարկը՝ դասավանդման ծրագիրը ներառում է հետևյալ դասընթացները՝ Հավասարության և խտրականության բացառման արդի հարցեր. Քրեական դատավարության առանձնահատկությունները և խոշտանգումների զննումը. մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի արդի հիմնահարցեր. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում և վերահսկողություն. Գենդերային բռնության փորձաքննություն:

Ի նկատի ունենալով այս ենթահատվածում արծարծվող թեման, այն է՝ ***հաշվետվողականությունը միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների ու զինված և այլ հակամարտությունների պայմաններում կանանց և աղջիկների մարդու իրավունքների խախտման համար,*** անհնարին է անտեսել լուրջ մտահոգություն պատճառող Ադրբեջանի գործողությունները քաղաքացիական բնակչության նկատմամբ, մասնավորապես, կանանց և տարեցների խոշտանգման դեպքերը 2016 թվականի ապրիլին հակամարտության էսկալացիայի ժամանակ և սահմանամերձ գյուղերի թիրախավորված գնդակոծությունները: Հարկ է նշել, որ Հայաստանի պետական մարմինները տեղեկացրել են այս դեպքերի մասին համապատասխան կազմակերպություններին, ներառյալ՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն

հանձնակատարին և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով դիտարկումները՝ կարելի է եզրակացնել, որ վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանը գործադրել է նշանակալի ջանքեր՝ խթանելու «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը և կատարելու իր միջազգային պարտավորությունները այս ոլորտում:

Ստորև տրված են որոշ առաջարկներ օրակարգի իրականացումը արագացնելու և այս ուղղությամբ գործողությունների արդյունավետությունը բարելավելու համար.

- Ինտեգրել գենդերային բաղադրիչը Լեռնային Ղարաբաղի հակամարտության էսկալացիայի կանխարգելման և տրանսֆորմացիայի գործին:
- Աջակցել հակամարտությունների ներառական և գենդերազգայուն վերլուծությանը, վաղ նախազգուշացման և կանխարգելման մեխանիզմներին:
- Քաջալերել կանանց բովանդակային մասնակցությունը խաղաղարար գործընթացներին, այդ թվում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական բանակցություններին:
- Ներառել կանանց, խաղաղության և անվտանգության հարցը պետական քաղաքականության և ծրագրերի մեջ՝ մասնավորապես ներառելով այն որպես առաջնահերթ ոլորտ Ազգային անվտանգության ռազմավարության նոր խմբագրությունում:
- Մշակել հաղորդակցման ռազմավարություն՝ բարձրացնելու իրազեկվածությունը «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի մասին:
- Նախաձեռնել ելակետային հետազոտություն այն կանանց շրջանում, որոնք ենթարկվել են հակամարտության անմիջական ներգործությանը՝ հստակեցնելու միջամտության կոնկրետ ոլորտները:
- Կատարել կանանց ամենախոցելի խմբերի (սահմանամերձ համայնքների բնակիչների, երիտասարդ կանանց, փախստականների, գյուղաբնակ

կանանց և այլոց) համապարփակ և բազմակողմանի կարիքների գնահատում՝ լավագույնս բավարարելու նրանց կարիքները:

- Բարելավել համագործակցության և գործընկերության մակարդակը համապատասխան պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև, հատկապես ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1325 բանաձևի վերաբերյալ ԳԱԾ-ի իրականացման համար:
- Գտնել բյուջետային հատկացումների հնարավորություններ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը խթանելու համար և, հատկապես, ՄԱԿ-ի ԱԽ թիվ 1325 բանաձևի վերաբերյալ ԳԱԾ-ի իրականացման համար:
- Մշակել ԳԱԾ-ի մշտադիտարկման և գնահատման ներառական և թափանցիկ գործընթաց, ներառյալ՝ ցուցանիշները, ժամանակացույցը և պարտականությունների բաշխումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

- 2019 թվականին ստեղծված Քաղաքացիական հասարակություն - Ազգային ժողով պլատֆորմի շրջանակներում հատուկ ուշադրություն դարձնել կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգին, որը չկարգավորված ղարաբաղյան հակամարտության պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունի:
- Անհրաժեշտ է առավել լայն օգտագործել խորհրդարանական դիվանագիտությունը, ներառյալ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի և Եվրախորհրդի միջխորհրդարանական վեհաժողովի միջազգային ամբիոնը՝ առաջ տանելու կանանց, խաղաղության և անվտանգության խնդիրը ղարաբաղյան հիմնահարցի լուծման տեսանկյունից և ցուցադրել Հայաստանի ջանքերը այս ուղղությամբ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևի՝ ազգային պլանի ընդունումը և իրականացումը:

***

ՄԱՍ 3. ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ՝

ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Պեկինի Գործողությունների ծրագրում «**Կանայք և տնտեսությունը» մտահոգության ոլորտում** ամրագրված ռազմավարական նպատակներն են.

1. Կանանց տնտեսական իրավունքների և ինքնուրույնության խրախուսում, ներառյալ վարձու աշխատանքի մատչելիությունը, աշխատանքի պատշաճ պայմաններ և տնտեսական ռեսուրսների վերահսկողություն:
2. Ռեսուրսների, աշխատատեղերի, շուկայի և առևտրի հավասար մատչելիություն կանանց համար:
3. Ծառայությունների մատուցում բիզնեսի, մասնագիտական պատրաստության ոլորտում, ինչպես նաև ծառայություններ շուկաների, տեղեկատվության և տեխնոլոգիաների մատչելիության ապահովման համար, հատկապես ցածր եկամուտ ունեցող կանանց:
4. Կանանց տնտեսական ներուժի և առևտրային ցանցերի ամրապնդում:
5. Մասնագիտական խտրազատման և աշխատանքի տեղավորվելիս դրսևորվող խտրականության բոլոր ձևերի վերացում:
6. Կանանց և տղամարդկանց աշխատանքային և ընտանեկան պարտականությունների հավասարակշռված բաշխման օժանդակություն:

Ստորև ներկայացվում է վերջին հինգ տարիների ընթացքում կանանց տնտեսական իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության ձեռքբերումների և համակարգային խնդիրների ընդհանուր գնահատականը: Ներկայացվում են նաև առաջարկություններ՝ բարձրացնելու կառավարության գործողությունների արդյունավետությունը:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Նշված ժամանակահատվածում ամենակարևոր ձեռքբերումը կանանց համար հավասար տնտեսական հնարավորությունների ամրագրումն է ՀՀ Սահմանադրությունում: Գործող ՀՀ Սահմանադրությանը պարունակում է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանման մասին մի շարք կարևորագույն դրույթներ, այն են.

Հոդված 29. Խտրականության արգելքը. *Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:*

Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը. *Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:*

Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները. *Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ 2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը. 4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը:*

Հոդված 87. Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը. *1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները: 2. Կառավարությունը Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ:*

2017 թվականի դեկտեմբերին ընդունված **«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում**[62] փոփոխություններով՝ ՀՀ Կառավարությունն առաջին քայլն արեց կանանց համար ընտանեկան պարտականությունների և աշխատանքի համատեղման հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Այս օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով սահմանվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող երիտասարդ մայրերին՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցություն ստանալու իրավունքը: Ըստ այդմ, 2018 թ. իրականացվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց աջակցության տրամադրման ծրագիրը, ըստ որի՝ մինչև երեխայի երկու տարին

[62] https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734

լրանալը մայրերի՝ աշխատանքի վերադառնալու դեպքում պետությունը աջակցություն կցուցաբերի երեխայի խնամքը կազմակերպելու գործում: Այլ կերպ ասած՝ պետական մոտեցում է ցուցաբերվում դայակներին, և մինչ օրս ստվերում գործող մասնագետները բերվում են օրինական դաշտ: Ծրագիրը փորձնական էր, նրանից օգտվելու հնարավորություն 2018 թ. ունեցան 300 կանայք: Շահառուների թիվն այս տարվա համար շուրջ 500 է[63]:

Աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության վերացման որոշակի դրույթներ է պարունակում նաև **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»** ՀՀ օրենքը, որն առավելագույնս ներառել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մի շարք պահանջներ: Օրենքը, մասնավորապես, ամրագրում է «գենդերային խտրականություն» հասկացությունը, կարգավորում է քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրական գործունեության, առողջապահության, կրթության ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման խնդիրը, նախատեսում է սեռի հատկանիշով խտրականության դրսևորումներից քաղաքացիների պաշտպանության հնարավորությունը և կարգը, ինչպես նաև պատասխանատվություն խտրական գործելակերպի համար:

2019 թ. ՀՀ աշխատանքային օրենսգիրքը լրացվեց նոր՝ «Խտրականության արգելումը» հոդվածով.

«3.1. Խտրականության արգելումը

1. Աշխատանքային օրենսդրությամբ խտրականությունն արգելվում է:

2. Խտրականություն է համարվում *սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային հարաբերությունների ծագման և (կամ) փոփոխման և (կամ) դադարման դեպքերում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ*

[63] Աղբյուր՝ Republic of Armenia Review of the Implementation of the Beijing Declaration and Platform for Action, Beijing+25, Government report, 2019.https://www.unece.org/fileadmin/DAM/Gender/Beijing_20/Armenia.pdf

այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:

3.Աշխատանքի ընդունման հայտարարություններում *(մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ, եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից»:*

Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարության մշակած «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածով սահմանվում են աշխատանքային հարաբերություններում խտրականությունն արգելող իրավական կարգավորումները, համաձայն որոնց՝ աշխատանքային հարաբերություններում արգելվում են անձի նկատմամբ առանց օբյեկտիվ հիմքերի ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որի արդյունքում խախտվում է աշխատանքային հարաբերություններում իրավահավասարությունը, և անձը զրկվում է մյուսների համեմատ հավասար իրավունքներից և հնարավորություններից[64]:

2014 թ.-ից[65] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից զբաղվածության ոլորտում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են աշխատանք փնտրողների զբաղվածության ապահովման աջակցմանը: **Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի** շրջանակներում իրականացվում են մի շարք պետական ծրագրեր և ենթածրագրեր, որոնք միտված են նաև կանանց զբաղվածության ապահովմանը և աշխատաշուկայում ներգրավմանը: 2014-2019 թթ. այդ ծրագրերի շահառու են դարձել ավելի քան 20000 կին:

2016 թ.-ից **«Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին»** որոշմամբ մայրության նպաստ են ստանում նաև չաշխատող և ինքնազբաղված կանայք: Չաշխատող և ինքնազբաղված կանանց մայրության նպաստը տրվում է աշխատող մայրերի համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հղիության և ծննդաբերության արձակուրդի 140 օրվա համար:

---

[64] Նույն տեղում:

[65] Համաձայն ՀՀ Կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման:

Ներկայումս **ՀՀ աշխատանքային օրենսգրքում** ընթանում են փոփոխություններ, որոնցով նախատեսվում է մեծացնել աշխատանքի և ընտանիքի համատեղման հնարավորությունները, ինչպես նաև ընդլայնել տնային աշխատանքի և չվճարվող խնամքի ճանաչմանն ուղղված պետական քաղաքականության գործիքները:

Հայաստանում կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում նաև միջազգային և ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Դրանց թվում են.

«ՕքսԵՋԵն» հիմնադրամի կողմից՝ ա) ԵՄ աջակցությամբ. Իրականացված **Inspired+ Armenia ծրագիրը**՝ ուղղված կանանց աշխատանքային իրավունքներին և մշակվել է ճանապարհային քարտեզ դրանց բարելավման ուղղությամբ. բ) Visegrad հիմնադրամի աջակցությամբ. ուսումնասիրվել է աշխատանքի շուկայում կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման միջազգային լավագույն փորձը, որի հիման վրա ոլորտի **քաղաքականության բարեփոխման առաջարկություններ** են արվել նաև Հայաստանի համար՝ հաշվի առնելով նաև տեղական համատեքստը. գ) Շվեդիայի կառավարության աջակցությամբ. ծավալվել է մասնակցային քննարկում երկրում առկա կանանց հիմնախնդիրների շուրջ, և ձևավորվել է **Կանանց օրակարգը**, որն ամփոփում է գենդերային քաղաքականության բարելավման ազգային առաջնահերթությունները: Նաև մեկնարկել է «Հավասար» հանրային քարոզարշավ՝ ազգային մակարդակում կանանց տնտեսական իրավունքների շուրջ՝ թիրախում պահելով ոչ միայն խնդիրների բարձրաձայնումը, այլև քաղաքականությունների բարելավումը. դ) Ավստրիական զարգացման գործակալության աջակցությամբ՝ թիրախավորվել է **գյուղատնտեսության ոլորտում զբաղված կանանց տնտեսական իրավազորումը**, որի արդյունքում համայնքներում ձևավորվել են ինքնավար կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ: Նրանց տրամադրվել են ջերմոցներ, կառուցվել են գյուղմթերքի վերամշակման համայնքային արտադրամասեր:

Համաշխարհային բանկի (World bank) և Ասիական զարգացման բանկի (ADB) կողմից իրականացվել են մի շարք հետազոտություններ Հայաստանում կանանց տնտեսական իրավունքի իրացման վերաբերյալ:

2019 թ. մեկնարկած **«Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում»** ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ Կանայք կազմակերպության ծրագիրը[66], որի նպատակն է ապահովել, որ կանայք, մասնավորապես, աղքատ և սոցիալապես բացառված կանայք, Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում տնտեսապես հզորանան և մասնակցեն որոշումների կայացման համապատասխան գործընթացներին:

ԽՆԴԻՐՆԵՐ. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հայաստանում չնայած կանանց բարձր կրթական մակարդակին՝ նրանց ներդրումը երկրի տնտեսական զարգացման մեջ զգալիորեն ավելի ցածր է իրենց իրական ներուժից: Գործնականում կանայք գրեթե չեն ներազդում տնտեսական զարգացմանը վերաբերող քաղաքական որոշումների կայացման վրա և, ընդհանուր առմամբ, ոչ բավարար չափով են ներգրավված կառավարման և զարգացման գործընթացներում: Այդպիսի իրավիճակը բնութագրվում է որպես մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում, ինչպես նաև անմիջականորեն ազդում է երկրի զարգացման գործընթացների և մրցունակության վրա:

Գենդերային անհավասարակշռության և երկրի մրցունակության միջև անմիջական կապը բացահայտվում է **Գենդերային բացի ցուցանիշի**[67] միջոցով, որը հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից չորս առանցքային ոլորտներում՝ տնտեսական մասնակցություն և հնարավորություններ, քաղաքականություն, կրթություն և առողջապահություն՝ արտացոլելով կանանց և տղամարդկանց հնարավորությունների միջև եղած տարբերությունը նշված ոլորտներից յուրաքանչյուրում: 2020-ին Գենդերային բացի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 98-րդ հորիզոնականը աշխարհի 153 երկրների շարքում[68]:

Աղբյուր	Ցուցանիշ	Միավոր	Տեղ
2019 Մարդկային զարգացման զեկույց [69]	Մարդկային զարգացման ցուցանիշ	0.760 ↘	81/188
	Գենդերային անհավասարության ցուցանիշ	0.259 ↘	

[66] Ծրագիրն իրականացվում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ:
[67] Gender Gap Index
[68] http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2020.pdf
[69] http://hdr.undp.org/en/content/2019-human-development-index-ranking

2020 Գենդերային բացի համաշխարհային զեկույց	Գենդերային բացի ինդեքս	0.684 ↘	98/153
	Տնտեսական հնարավորություն և մասնակցություն	0.673 ↘	78/153
Սոցիալական դիտման զեկույց 2019[70]	Գենդերային արդարության ինդեքս	0.259 ↘	57/162
Մարդկային կապիտալի զեկույց, Համաշխարհային տնտեսական ֆորում 2017	Մարդկային կապիտալի ինդեքս	49/130 երկրներ	

Տնտեսական գործունեության ոլորտում գենդերային անհավասարակշռության ցուցանիշներով (տղամարդկանց և կանանց զբաղվածության մակարդակի հարաբերակցությունը, հավասար վարձատրությունը հավասար աշխատանքի դիմաց, տղամարդկանց և կանանց մասնաբաժինը մասնագետների և տեխնիկական աշխատակիցների կազմում) 2019-ին Հայաստանը վատթարացրել է իր դիրքերը՝ զբաղեցնելով 78-րդ հորիզոնականը՝ 2016-ի 69-րդ հորիզոնականի և մինչճգնաժամային 2007-ի 24-րդ հորիզոնականի համեմատ: Այս ցուցանիշի կառուցվածքում առավել մեծ է գենդերային բացը զբաղվածության (84-րդ հորիզոնականի) Labour force participation և Estimated earned income (PPP US$) (97-րդ հորիզոնական) ոլորտներում:

Հայաստանում աշխատաշուկայի հիմնախնդիրները պարզորոշ երևում են 2017 թ. **Մարդկային կապիտալի ցուցանիշը** դիտարկելիս: Համաշխարհային տնտեսական ֆորումի (The Global Human Capital Index) 2017 թ. զեկույցի համաձայն[71], Հայաստանն աշխարհի 130 երկրի շարքում զբաղեցրել է 49-րդ հորիզոնականը՝ զարգացնելով իր մարդկային կապիտալի 64%-ը: Ցուցանիշը

[70] https://gtmarket.ru/ratings/gender-equity-index-un/info

[71] https://www.weforum.org/reports/the-global-human-capital-report-2017 - հաշվի է առնվում ավելի քան 50 ցուցանիշ, որոնք միավորվում են 4 հիմնական խմբերում՝ կրթություն (բարձրագույն, միջնակարգ, տարրական) և մասնագիտական պատրաստվածությունը. առողջություն, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությունը. աշխատանքի տեղավորումն ու զբաղվածությունը. ենթակառուցվածքը, իրավական պաշտպանվածությունը, սոցիալական մոբիլությունը:

բնութագրվում է 4 չափումներով՝ ներուժի առկայություն/կրթություն, ներուժի իրացում, զարգացում և նոու հաու: Թեպետ կրթության ընդգրկվածության ցուցանիշներով Հայաստանը 3-րդ հորիզոնականում է, սակայն ներուժի իրացման ցուցանիշով, որը ներառում է զբաղվածության ոլորտում գենդերային բացը և գործազրկությունը, 114-րդ հորիզոնականում է, ինչը վկայում է մարդկային կապիտալի ոչ արդյունավետ իրացման մասին:

Խոչընդոտները, որոնց բախվում են կանայք աշխատանքի շուկայում, հանգեցնում են մարդկային կապիտալի ոչ լիարժեք օգտագործման ու տնտեսական կորուստների ոչ միայն կանանց և նրանց ընտանիքների, այլև ամբողջ հասարակության համար:

15-75 տարեկան բնակչությունն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի[1], 2018թ.
Population Aged 15-75 by the Economic Activity Status[1], 2018

(համապատասխան խմբի տեսակարար կշիռն է նույն սեռի աշխատանքային ռեսուրսների մեջ, %)
(proportion of relevant group to working-age population of the same sex, %)

Գծապատկեր 7.1
Graph 7.1



Աղբյուրը՝ ԱԲՀ, Արմստատ
Source: LFS, ARMSTAT

Հայաստանում կանանց միայն կեսն է մասնակցում աշխատաշուկային, ինչը տղամարդկանց համեմատ 21.6%-ով ավելի ցածր ցուցանիշ է: Այդ բացի պատճառներից մեկը՝ գենդերային նորմերով պարտադրված կանանց՝ որպես տնային տնտեսությունների խնամակալների դերակատարումն է: Կանանց համար հիմնական խոչընդոտները հաճախ պայմանավորված են ընտանիքի խնամքի հետ կապված պարտականությունների և աշխատանքային գործունեության համադրման դժվարություններով, ինչն էլ հանգեցնում է աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում կանանց ցածր մասնակցության, նրանց նվազ եկամուտների և անհավասարության այլ դրսևորումների:

Աշխատուժից դուրս բնակչության մակարդակն ըստ չաշխատելու պատճառների, 2018թ.
Population Level Out of Labour Force by Reasons for not to Work, 2018

Աղյուսակ 8.2
Table 8.2

(յուրաքանչյուր խմբի մասնաբաժինն է նույն սեռի աշխատանքային ռեսուրսների մեջ, %)
(share of each group to working-age population of the same sex, %)

	Կ / W	Տ / M	
Ընտանեկան հանգամանքներ	22.4	0.4	*Family circumstances*
Սովորող, ուսանող	6.8	7.0	*Full-time students, pupils*
Հիվանդություն, հաշմանդամություն	12.1	9.7	*Illness, disability*
Չունեն աշխատանք գտնելու հույս (հուսազուրկներ)	11.2	9.7	*Hopeless to find a job (discouraged)*
Մեկնելու են / գտնվում են արտերկրում	0.2	0.6	*Going abroad / is abroad for a job*
Այլ	0.1	3.8	*Other*
Ընդամենը	**52.8**	**31.2**	***Total***

Աղբյուրը՝ ԱԸՀ, Արմստատ
Source: LFS, ARMSTAT

Գործատուների կողմից ցուցաբերվող խտրականությունը լրացուցիչ գործոն է կանանց աշխատուժի շուկայում մասնակցության սահմանափակման գործում: Ու թեպետ խտրականությունն արգելող սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությունում և Աշխատանքային օրենսգրքում, բայց միշտ չէ, որ դրանք գործում են: Խտրականության առկայությունը կարող է մասամբ բացատրել Հայաստանում գենդերային բացերի շարունակականությունը:

Զբաղվածություն

Կանանց մասնաբաժինը աշխատանքային ռեսուրսների կազմում 55% է, սակայն տնտեսապես ակտիվ է կանանց 55,8%-ը, իսկ տղամարդկանց՝ 75,2%-ը, ընդ որում, կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության գենդերային բացը 25-34 տարիքային խմբում 41.6% է, ինչը հիմնականում պայմանավորված է կանանց ընտանեկան պարտականություններով (հղիություն, ծննդաբերություն, երեխայի և ընտանիքի այլ անդամների խնամք)[72]:

Ցուցանիշ	Միավոր	Տեղ	Կին	Տղամարդ
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ[73]	0.673	78/153		
Աշխատուժի մասնակցություն %	0.742	96/153	55.8	75.2
Ղեկավար անձնակազմ, բարձր պաշտոններ %	0.419	88/153	29.5	70.5
Մասնագետներ, պրոֆեսիոնալներ %	1/153	1.000	64.2	35.8

Զբաղվածների ընդհանուր թվում կանայք կազմում են 47,5%, տղամարդիկ՝ 52,5%: Զբաղված կանանց 30,3%-ը, իսկ տղամարդկանց 28,1%-ը ունի բարձրագույն կամ հետբուհական կրթություն, այնուամենայնիվ ղեկավար պաշտոններ զբաղեցնողների մեջ կանայք կազմում ընդամենը 29.5 %:

Ցուցանիշը	Չափումը		
Աշխատուժի մասնակցություն	**Կին**	**Տղամարդ**	**Արժեք**
Աշխատուժ/ մլն	0.55	0.60	0.48
Գործազուրկ մեծահասակներ (15-64) %	18.2	18.3	1.0
Կես դրույքով աշխատողներ	42.9	23.8	**1.8**0

Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ հիմնականում վարձու աշխատողներ են: Գործատուների և ինքնազբաղվածների մեծամասնությունը տղամարդիկ են,

[72] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://armstat.am/file/article/gender_2019.pdf

[73] 2020 Գենդերային բացի համաշխարհային զեկույց, http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2020.pdf

մինչդեռ առանց վարձատրության աշխատող ընտանիքների անդամների թվում կանայք կրկնակի գերազանցում են տղամարդկանց: Տնտեսության պետական հատվածում զբաղված են ավելի շատ կանայք, քան տղամարդիկ: Ոչ լրիվ աշխատանքային օրով զբաղված է կանանց 39,2%-ը, իսկ տղամարդկանց՝ 21,6%-ը, ընդ որում, դա հիմնականում պայմանավորված է աշխատանքի բնույթով կամ սեզոնայնությամբ: Առավել տարածված մյուս պատճառը կանանց դեպքում ընտանեկան պարտականությունների պատճառով լրիվ օրով աշխատելու հնարավորության բացակայությունն է, իսկ տղամարդկանց դեպքում այն է, որ ուղղակի չեն կարողացել գտնել լրիվ աշխատանքային օր տևողությամբ աշխատանք:



Գյուղատնտեսությունը հանրապետությունում զբաղվածության ամենախոշոր ոլորտն է, որտեղ աշխատում է զբաղվածների շուրջ 34%-ը: Նրանցից 48%-ը կանայք են, ինչը կանանց դարձնում է գյուղատնտեսության զարգացման առավել

կարևոր մասնակից: Ընդ որում, տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությանը բաժին է ընկնում 24%-ը, իսկ կանանց զբաղվածության կառուցվածքում՝ 26%-ը: Ըստ էության, գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը ստեղծվում է կանանց կողմից, և նրանք են սննդամթերքի մատակարարման և գյուղական վայրերում տնային տնտեսությունների գոյատևման հիմնական երաշխավորները: Դրա հետ մեկտեղ կանանց զբաղվածությունը գյուղատնտեսության ոլորտում հիմնականում ոչ ֆորմալ բնույթ է կրում, ինչը հիմք է տալիս բնութագրելու կանանց որպես աշխատաշուկայի ամենացածր վարձատրվող և սոցիալապես չպաշտպանված սեգմենտի ներկայացուցիչներ: Գյուղատնտեսության համատարած հաշվառման տվյալներով՝ գյուղացիական տնտեսությունների 25%-ը կանայք են ղեկավարում:

Կին գլխավորով տնային տնտեսություններն առավել խոցելի են գյուղտեխնիկայի բացակայության, հողակտորների դժվար հասանելիության, ոռոգման հնարավորությունների և ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրների պատճառով:

Գործազրկություն

Ըստ 2019 թ. Մարդկային զարգացման զեկույցի Հայաստանում կանանց և տղամարդկանց գործազրկության տարբերությունը 1.02 է:

Գործազրկության մակարդակը Հայաստանում ամենաբարձրն է ԱՊՀ երկրներից[74]. կանանց շրջանում այն 21% է, իսկ տղամարդկանց շրջանում 20,1% է կազմում: Դրա հետ մեկտեղ կան էական գենդերային տարբերություններ գործազրկության տևողության և չաշխատելու պատճառների մեջ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների 67,8%-ը կանայք են, ընդ որում, երկարատև գործազրկության մակարդակը հատկապես բարձր է կանանց շրջանում՝ կազմելով գործազուրկ կանանց 62%-ը[75]:

[74] http://www.cisstat.com/
[75] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://armstat.am/file/article/gender_2019.pdf

Գործազրկության մակարդակն ըստ տարիքային խմբերի, 2018թ.
Unemployment Rate by Age Groups, 2018

(գործազուրկների մասնաբաժինն է նույն խմբի աշխատուժի մեջ, %)
(share of unemployed to labour force of the same group, %)

Աղյուսակ 14.2
Table 14.2

	Կ / W	Տ / M
15 - 24	41.1	33.9
25 - 49	22.3	19.3
25 - 64	14.4	17.2
50 - 64	7.3	17.4
65 - 75	28.2	22.2
15 - 64	21.7	20.2
Ընդամենը Total	**21.0**	**20.1**

Գծապատկեր 14.3
Graph 14.3



Աղբյուրը՝ ԱԸՀ, Արմստատ
Source: LFS, ARMSTAT

Երիտասարդները (16-30 տարեկան) աշխատաշուկայում շարունակում են մնալ որպես կայուն խոցելի խումբ՝ տնտեսական ակտիվության 47,9%, զբաղվածության 30,3% ցածր մակարդակով և, համապատասխանաբար, գործազրկության 36,7% բարձր մակարդակով: 2018 թ. տվյալներով՝ 15-29 տարեկան իգական սեռի երիտասարդների գրեթե 46%-ը և արական սեռի երիտասարդների 34%-ը չէր սովորում և չէր աշխատում[76]:

Աշխատավարձերի տարբերություն[77]

Ընդհանուր առմամբ, Հայաստանի աշխատաշուկայում գենդերային իրավիճակը բնութագրվում է ուղղահայաց (կարիերային աճի անհավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և զբաղվածության ոլորտների) խտրազատման (սեգրեգացիայի) առկայությամբ, ինչը հանգեցնում է աշխատավարձում գենդերային էական խզման/բացի:

2017-2018 թթ. Տվյալներով՝ ՀՀ-ում կանանց միջին ամսական անվանական աշխատավարձը (վաստակը) կազմել է տղամարդկանց վաստակի 64,7%-ը, կամ վարձատրության գենդերային բացը կազմել է 35,3%: Վերջին 10 տարիների ընթացքում այդ տարբերությունը կրճատվել է միայն 6 տոկոսային կետով:

[76] Նույն տեղում:
[77] Gender Pay Gap

Կանանց մասնագիտական առաջընթացում առկա դժվարությունների պատճառով բարձր կրթական մակարդակը միշտ չէ, որ մեղմում է աշխատավարձի գենդերային բացը: Ուղղահայաց խտրազատումը պահպանվում է նույնիսկ զբաղվածության ավանդաբար կանացի համարվող ոլորտներում՝ առողջապահություն, կրթություն, մշակույթ, գյուղատնտեսություն: Ղեկավար պաշտոն զբաղեցնող տղամարդիկ գերազանցում են կանանց 2,4 անգամ: Կանայք ավելի շատ են ներգրավված բարձր (59%) և միջին (58%) որակավորում պահանջող աշխատանքներում, քան տղամարդիկ:

Հանրապետությունում անցկացված հարցումները բացահայտում են, որ հասարակական կարծիքը արդարացնում է կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի տարբերությունը՝ գտնելով, որ կնոջ աշխատելու պարագայում տղամարդու աշխատավարձի չափը պետք է անպայմանորեն ավելի բարձր լինի, քան կնոջը, քանի որ հակառակ դեպքում կինը կարող է օգտագործել այդ հանգամանքը՝ ընտանեկան հարաբերություններում «անհնազանդություն» ցուցաբերելով[78]: Այս ուղղությամբ իշխանությունների կողմից քարոզչական որևէ աշխատանք չի կատարվում, ինչը նպաստում է գենդերային կարծրատիպերի պահպանմանը:

[78] ԳՀԱԿ, Հայաստանի գենդերային բարոմետր, Երևան, 2015
http://www.ysu.am/files/Gender%20Barometer.Armenia.English.pdf

Միջին աշխատավարձի սեռային խզվածքն ըստ տնտեսական գործունեության խոշոր խմբերի, 2018թ.
Gender Pay Gap by Major Sectors of Economic Activity, 2018

Գծապատկեր 13.2
Graph 13.2



A	Գյուղատնտեսություն	*Agriculture*
B, C, D, E	Արդյունաբերություն	*Industry*
F	Շինարարություն	*Construction*
G, H, I	Առևտուր, նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում	*Trade and repair, Transport and storage, Accommodation and food service activities*
J	Տեղեկատվություն և կապ	*Information and communication*
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	*Financial and insurance activities*
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	*Real estate activities*
M, N	Մասնագիտական և գիտական, տեխնիկական, վարչարարական և օժանդակ գործունեություն	*Professional, scientific and technical activities; Administrative and support service activities*
O	Պետական կառավարում	*Public administration*
P	Կրթություն	*Education*
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	*Human health and social work activities*
R, S	Այլ ծառայություններ	*Other services*

Աղբյուրը՝ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան է:
Source: Information is the State Revenue Committee (SRC). Income Tax and Social Payment Individual Accounting Database

Գենդերային տարբերություններ կան նաև կենսաթոշակների չափերում, թեև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը կանանց և տղամարդկանց համար կենսաթոշակային միասնական տարիք է սահմանել 63 տարեկանը: 2018 թվականին կենսաթոշակի միջին չափը կանանց համար կազմել է 39.158 դրամ, տղամարդկանց համար՝ 42.520 դրամ[79]:

[79] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://armstat.am/file/article/gender_2019.pdf

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության 31.2%-ը տղամարդիկ են, 52.8%-ը՝ կանայք: Գենդերային բացը հատկապես բարձր է 25-49 տարիքային խմբում (64,9%-71,5%), ինչը նույնպես հիմնականում պայմանավորված է կանանց ընտանեկան պարտականություններով՝ հղիություն, ծննդաբերություն, երեխայի խնամք, տնային տնտեսությամբ ծանրաբեռնվածություն և այլն[80]:

Տնտեսապես ոչ ակտիվ կանանց մեծ մասը տնային տնտեսուհիներ են: 2019 թ. 15-75 տարեկան կանանց 47%-ը չի ունեցել աշխատանք և չի փնտրել՝ հիմնականում զբաղված լինելով տնային տնտեսությամբ: Կանայք կատարում են տնային տնտեսություններում չվճարվող աշխատանքի մեծ մասը, որը չի ստանում արժեքային որևէ գնահատում և չի արտացոլվում ազգային հաշիվների համակարգում: Դրա հետ մեկտեղ տնտեսապես ոչ ակտիվ կանանց մոտ 40%-ը ունի բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն[81]:

Հետազոտությունները փաստում են, որ եթե Հայաստանում ավելի շատ կանայք աշխատեին իրենց մասնագիտությամբ և ոչ թե իրենց կամքով կամ իրենց կամքին հակառակ սահմանափակվեին միայն տնային տնտեսուհու կարգավիճակով, ապա Հայաստանի տնտեսության համախառն ներքին արդյունքը՝ ՀՆԱ-ն, առնվազն 50-60 միլիոն դոլարով ավելին կլիներ[82]:

Աշխատանք գտնելու խոչընդոտներ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թ. կատարված ժամանակի բյուջեի ուսումնասիրության տվյալներով՝ կանայք չվճարվող աշխատանքի (տնային տնտեսության և ընտանիքի խնամքի) վրա ծախսում են 5 անգամ ավելի շատ ժամանակ, քան տղամարդիկ: Վճարվող աշխատանքը կնոջը չի ազատում տնային աշխատանքից նույն չափով, ինչ տղամարդկանց, ինչի հետևանքով կանայք, տղամարդկանց հետ համեմատած, ավելի մեծ ծավալով աշխատանք են կատարում: Տղամարդիկ երեք անգամ ավելի շատ ժամանակ են

[80] Նույն տեղում:
[81] Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://armstat.am/am/?nid=82&id=2226
[82] Կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն, ՄԱԲՀ, 2016, http://armenia.unfpa.org/hy/node/7000

ծախսում վճարվող աշխատանքի վրա և գրեթե 30%-ով ավելի շատ ազատ ժամանակ են ունենում, քան կանայք:

Աշխատանք գտնելու խոչընդոտների թվում և՛ կանայք, և՛ տղամարդիկ առաջին տեղում նշում են աշխատատեղերի պակասը: Երկրորդ տեղում կանանց համար ոչ բավարար աշխատանքային փորձն է, իսկ տղամարդկանց մոտ՝ ցածր աշխատավարձը: Այս փաստն անուղղակիորեն ապացուցում է, որ կանանց հավակնությունները աշխատանքի վարձատրության առումով ավելի ցածր են, քան տղամարդկանցը: Կանայք զգալի մեծամասնություն են կազմում (70%) հուսազուրկների, այսինքն՝ այն անձանց թվում, որոնք չունեն աշխատանք գտնելու հույս և աշխատանք չեն էլ փնտրում: Երկրից մեկնելու մտադրությունն ավելի մեծ տեղ է գրավում տղամարդկանց չաշխատելու պատճառների թվում:



Ընտանեկան պարտականությունների և կարիերայի համատեղման հարցում պետական աջակցության միջոցներն անբավարար են, ինչի մասին է վկայում այն փաստը, որ ընտանեկան հանգամանքներով չաշխատողների 98%-ը կանայք են: Դա պայմանավորված է նաև երեխաների ցերեկային խնամքը ապահովող հաստատությունների պակասով, հատկապես մարզերում և գյուղական համայնքներում:

Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 28,9%, քաղաքներում՝ 35,6%, գյուղերում՝ 17,2%: Հատկապես ցածր է ընդգրկվածությունը 0-2 տարեկան երեխաների շրջանում՝ կազմելով ընդամենը 5,2%:

Աղքատություն

2018 թ. աղքատության մակարդակը Հայաստանում կազմել է՝ 23.5%, նրանցից 1.00 %-ը՝ ծայրահեղ աղքատ, 10.6%-ը[83]՝ շատ աղքատ[84]: Աղքատների 56,6%-ը կանայք են, 43,4%-ը՝ տղամարդիկ:

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների (դրանք հանրապետությունում 33% են կազմում[85]) աղքատության մակարդակը 2018 թ. ավելի բարձր է տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակից (28.0%՝ 22.0%-ի դիմաց): 2018 թ. կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմել են աղքատների և ամբողջ բնակչության, համապատասխանաբար, 30% և 25%-ը: Միջին հանրապետական մակարդակի համեմատ՝ մինչև 6 տարեկան երեխա ունեցող կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններն աղքատ լինելու ավելի մեծ (1.6 անգամ) ռիսկ ունեն: Քաղաքային բնակավայրերում նշված տնային տնտեսությունների աղքատ լինելու հավանականությունն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերում (40.8%՝ 31.8%-ի դիմաց)[86]:

Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, 2018.[87] (%)

Գլխավորի սեռը	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	% ընդհանուր բնակչության մեջ
Տղամարդ՝ գլխավոր	0.9	22.0	69.8	74.6
Կին՝ գլխավոր, այդ թվում՝	1.3	28.0	30.2	25.4
Կին գլխավոր՝ առանց մինչև 6 տարեկան երեխայի	0.9	25.2	20.9	19.5
Կին գլխավոր՝ մինչև 6 տարեկան երեխաներով	2.4	37.3	9.3	5.9
Ընդամենը	1.0	23.5	100	100

Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորողի սեռի, ըստ տարվա բնակչության, 2008-2018 թթ.[88]

[83] ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2008-2018 թթ. https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 41:
[84] «Շատ աղքատ» եզրույթը փոխարինվել է «չափավոր աղքատ»-ով https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 21:
[85] Հայաստանի կանայք և տղամարդիկ,2019, https://www.armstat.am/file/article/gender_2019.pdf, էջ 88:
[86] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 54:
[87] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 55:



Ձեռնարկատիրություն

Տնտեսությունը չի կարող զարգանալ իր ողջ ներուժով, քանի դեռ կանայք և տղամարդիկ ամբողջովին մասնակից չեն երկրի զարգացման գործընթացներին: Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Կանայք, բիզնեսը և օրենքը 2020 թ.» զեկույցը[89] գնահատում է այն օրենքները, որոնք առնչվում են կանանց աշխատանքային ու ձեռնարկատիրական գործունեությանը և ուղղված են կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը և գենդերային հավասարության հաստատմանը: Զեկույցի գնահատականներով՝ աշխարհի 40 երկրներ իրականացրել են 62 օրենսդրական բարեփոխումներ, որոնք կօգնեն կանանց իրացնելու իրենց ներուժը և նպաստելու իրենց երկրների տնտեսական աճին և զարգացմանը[90]:

Ըստ զեկույցի՝ **Հայաստանը 190 երկրների շարքում 69-րդն է՝ ընդհանուր 82,5 միավորով**: Մասնավորապես՝ շարժունակության չափանիշով Հայաստանի Հանրապետությանը բաժին է ընկել 100 միավոր, աշխատանքի տեղավորման գծով՝ 50, աշխատանքի վարձատրության՝ 75, ամուսնության՝ 100, մայրական խնամքի՝ 60, բիզնեսի վարման՝ 75, սեփականության տնօրինման՝ 100 և կենսաթոշակային ապահովման՝ 100 միավոր: Ըստ 2020 Գենդերային բացի համաշխարհային զեկույցի՝ կանանց գլխավորած կամ բաժնեմաս ունեցող

[88] https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf, էջ 55:
[89] World Bank. 2020. Women, Business and the Law 2020. Women, Business and the Law. Washington, DC: World Bank. doi:10.1596/978-1-4648-1532-4. License: Creative Commons Attribution CC BY 3.0 IGO https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32639/9781464815324.pdf?sequence=10
[90] Զեկույցի հեղինակներն օգտագործել են 100 բալանոց համակարգ՝ գնահատելով կանանց տնտեսական մասնակցությանը նպաստող օրենսդրական դաշտը՝ կնոջ գործնական կյանքը բնութագրող 8 չափորոշիչներով. այն է՝ շարժունակություն, աշխատատեղ, վարձատրություն, ամուսնություն, մայրական խնամք, ձեռներեցություն, սեփականության տնօրինում և կենսաթոշակ:

բիզնես կառույցները կազմում եմ ընդամենը 14.5%՝ տղամարդկանց 85.5%-ի դիմաց[91]:

Որպես զբաղվածության և սոցիալական հիմնախնդիրների լուծման արդյունավետ միջոց՝ ՀՀ կառավարությունը դիտում է տնտեսության մասնավոր ոլորտի, մասնավորապես՝ փոքր և միջին բիզնեսի առաջանցիկ զարգացումը: Հայաստանի ձեռնարկատերերի հանրապետական խորհրդի գնահատմամբ՝ խոշոր, միջին և փոքր բիզնեսում կանանց մասնաբաժինը չի գերազանցում 10%-ը: Միկրոբիզնեսում կանանց մասնաբաժինը ավելի մեծ է՝ 20-25%[92]:

Վերջին տարիներին կիրառվում է ԱՄԿ Զբաղվածության կարգավիճակի միջազգային դասակարգչի (ICSE - 93) *Զբաղվածներն ըստ զբաղվածության կարգավիճակի դասակարգում* սկզբունքը՝ տարանջատելու վարձու և ոչ վարձու աշխատողներին, ըստ որի *գործատուն անձն է, որն ինքնուրույն կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ զբաղված է եկամտաբեր գործունեությամբ և այդ նպատակով մշտապես ներգրավում է մեկ կամ ավելի վարձու աշխատողներ,* բայց դասակարգման փոփոխությունը չբերեց իրավիճակի փոփոխության, և գործատու կանանց տոկոսը զգալիորեն պակաս է (0.3) գործատու տղամարդկանց տոկոսից (1.4), տես՝ստորև[93]:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, 2018
WORK ACTIVITY, 2018

4.2.8. Զբաղվածներն ըստ զբաղվածության կարգավիճակի[1], 2018թ.
Employed Persons by Status in Employment[1], 2018

	Ընդամենը *Total*	Տղամարդ *Men*	Կին *Women*	Քաղաք *Urban*	Գյուղ *Rural*	
			1000 մարդ persons			
Ընդամենը	***975.1***	***531.5***	***443.6***	***517.5***	***457.7***	***Total***
Վարձու աշխատող	610.7	309.6	301.1	428.2	182.5	*Employee*
Գործատու	9.0	7.6	1.3	6.6	2.4	*Employer*
Ինքնազբաղված	341.6	210.0	131.6	81.6	260.0	*Own-account worker*
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	13.9	4.4	9.5	1.1	12.8	*Contributing family workers*
			Ընդամենի նկատմամբ, % As share of the total, %			
Ընդամենը	***100***	***100***	***100***	***100***	***100***	***Total***
Վարձու աշխատող	62.6	58.2	67.9	82.8	39.9	*Employee*
Գործատու	0.9	1.4	0.3	1.3	0.5	*Employer*
Ինքնազբաղված	35.1	39.5	29.7	15.8	56.8	*Own-account worker*
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	1.4	0.8	2.1	0.2	2.8	*Contributing family workers*

[91] http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2020.pdf
[92] Gender policy in Armenia and the right of women entrepreneurship
http://employers.am/News.aspx?NewsId=39&lang=eng
[93] https://www.armstat.am/file/article/trud_2019_4.pdf

Հայաստանում մասնավոր ձեռնարկատիրության գենդերային տեսանկյունները ոչ միշտ են հաշվառվում այդ ոլորտում գործող և բիզնեսի զարգացմանն աջակցող կազմակերպությունների կողմից: Մինչդեռ բիզնեսը սկսելիս կանայք պետք է հաղթահարեն հետևյալ խոչընդոտները՝ գործնական հմտությունների և պատրաստվածության բացակայություն, անորոշության զգացում և ռիսկի դիմելու ցանկության բացակայություն, գործնական կապերի բացակայություն, տնտեսության մեջ և բիզնեսում կանանց մասնակցության վերաբերյալ կարծրատիպերի առկայություն: Օբյեկտիվ պատճառներից են՝ ֆինանսների սահմանափակ մատչելիությունը, վարկ ստանալու դժվարությունները, ֆինանսական միջոցների և վարկ ստանալու համար սեփականության բացակայությունը, բարձր տոկոսադրույքները և այլն[94]:

Իրականում կանանց ձեռներեցության աջակցությունն ունի հսկայական ներուժ: Հայաստանի Հանրապետությունում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը նախանշում է ՓՄՁ-ների համար պետական աջակցության հիմնական ուղղությունները, որոնք ներառում են աջակցություն կանանց ձեռներեցությանը: 2014 թ. մշակված Կանանց ձեռներեցության հատուկ ռազմավարությունը նպատակ ունի մեծացնել կանանց մասնակցությունը տնտեսական զարգացմանը և կանանց ձեռներեցությանը, և վերջինը նույնպես 2016-2018 թվականների ՓՄՁ զարգացման ռազմավարությամբ սահմանվել է որպես ռազմավարական նպատակ:

Իրականացման մակարդակում՝ ՓՄՁ պետական աջակցության ամենամյա ծրագիրը պարունակում է հատուկ բաժին կանանց ձեռներեցության վերաբերյալ: 2016-2018 թվականների ընթացքում կառավարությունն անցկացրել է վերապատրաստում և մատուցել խորհրդատվական ծառայություններ քիչ փորձ ունեցող կամ որևէ փորձ չունեցող ձեռնարկությունների համար, իրականացրել է կարողությունների զարգացման միջոցառումներ և կազմակերպել վարչապետի «Լավագույն կին ձեռնարկատեր» մրցանակաբաշխությունը: Այս միջոցառումների համար ֆինանսական միջոցներն ապահովվել են դոնորային աջակցությամբ. օրինակ՝ ՓՄՁ ԶԱԿ-ը[95] և Ասիական զարգացման բանկը տրամադրել էին մեկանգամյա աջակցություն, վերապատրաստում և խորհրդատվություն ստարտափների համար:

[94] Gender Assessment USAID/Armenia

[95] Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցության կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ), ներկայումս՝ Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ (ՆԱԿՀ):

Իրազեկվածության ձևավորմանը և դերային մոդելներին վերաբերող գործողություն և ցուցանիշ են ներառվել կանանց ձեռներեցության ռազմավարությունում, իսկ 2016-2018 թվականների ՓՄՁ զարգացման ռազմավարությունը՝ որպես առաջնահերթություն ներառում է «կանանց ձեռներեցության աջակցում»[96]:

Կանանց ձեռնարկատիրությանն ու նրանց համար ֆինանսական միջոցների հասանելիությանը ավելի լայն իմաստով, բիզնեսում կանանց ներգրավվածությանը աջակցելու նպատակով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից իրականացվում է «Գործարար կանայք» ծրագիրը: ՎԶԵԲ-ը կանանց կողմից կառավարվող ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված ֆինանսական միջոցներ է տրամադրում տեղական բանկերին իր վարկային գծերի միջոցով, ինչպես նաև՝ բիզնես խորհրդատվություն, ինչը ձեռնարկություններին թույլ է տալիս բարձրացնել իրենց մրցունակությունը: Ծրագրի շրջանակներում 2015-2017 թթ. տարածաշրջանի (6 երկիր) գործընկեր բանկերի տրամադրվել է ավելի քան 36,3 միլիոն եվրո: 576-ից ավելի կանայք օգտվել են գիտելիքների (նոու հաուի) հասանելիությունից, այդ թվում՝ տարածաշրջանում իրականացված շուրջ 246 խորհրդատվական ծրագրերի միջոցով[97]:

Սակայն, աջակցությունն ազգային մակարդակում խիստ սահմանափակ է և իրականացվում է միայն մայրաքաղաքում: Հաճախ ՀԿ-ներն են հանդիսանում կանանց ձեռներեցության հիմնական խթանողները: Ընդհանուր առմամբ, ըստ ՓԲԱ-ի վերջին գնահատումից հետո՝ կանանց ձեռներեցության աջակությունը մնացել է կայուն, սակայն ունի բարելավման զգալի տեղ: Առաջ ընթանալով՝ Հայաստանը պետք է բարձրացնի շահագրգիռ կողմերի համակարգումը կանանց ձեռներեցության մասով՝ ազգային կառուցողական գործընկերության, օրինակ՝ ՓՄՁ-ների զարգացման խորհրդի միջոցով: Նման գործընկերությունը պետք է ներգրավի բոլոր առանցքային շահեկիցներին և ղեկավարի այս ոլորտում քաղաքականության մշակումը:

Այսպիսով, գործողությունների ծրագիրը կարող է ներառել խթանման գործողություններ, ինչպիսիք են՝ կին ձեռներեցների հաջողված պատմությունների տարածումը, ինչպես նաև նախատեսի կարողությունների

[96]OECD et al. (2020), SME Policy Index: Eastern Partner Countries 2020: Assessing the Implementation of the Small Business Act for Europe, SME Policy Index, European Union, Brussels/OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/8b45614b-en https://www.oecd.org/global-relations/SMEPI-EaP-2020-Armenia.pdf
[97] ՎԶԵԲ «Գործարար կանայք» ծրագիր, http://www.eu4business.eu/hy/programme/gortsarar-kanayk

զարգացման միջոցառումներ, ինչպես, օրինակ՝ վերապատրաստում կանանց առաջնորդության և կառավարման կոմպետենցիաները բարձրացնելու նպատակով: Ավելին, առաջընթացի և արդյունքների մոնիթորինգի և ազդեցության գնահատման գործառույթների վերագրումը հաստատություններին, օրինակ՝ ՓՄՁ ԶԱԿ-ին, կլինի ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների արդյունավետության և ռազմավարական ճշգրտումների անհրաժեշտ ճկունության ապահովմանն ուղղված կարևոր քայլ: Բարելավման առանցքային ոլորտներից կարող է լինել գործարար հատվածի վիճակագրական տվյալների, այդ թվում՝ սեռային տարանջատմամբ տվյալների պարբերական հավաքումը:

Կանայք տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում

Հայաստանն առաջինն է աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կանանց ներգրավվածությամբ: Այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է ԱՄՆ-ին, Կանադային և եվրոպական մի շարք երկրների. այս մասին են վկայում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ուսումնասիրությունները: Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ հայաստանյան բուհերում տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության բաժիններում աղջիկների թիվը չորս տարում աճել է ավելի քան հինգ անգամ:

Հայաստանի ՏՏ ոլորտում աշխատողների մոտ 30%-ը կանայք են, մինչդեռ այլ երկրներում՝ 20%-ը: Հայաստանի ՏՏ ոլորտի հիմնական առանձնահատկությունը ոչ միայն արագ աճն է, այլև գենդերային հավասարակշռության ձգտումը: «Օրինակ՝ «Սինոփսիս» ընկերության հայաստանյան գրասենյակում չիպերի նախագծման և կիսահաղորդիչների առաջատար դիրքերում աշխատող ինժեներների 33%-ը կանայք են, իսկ Սիլիկոնյան հովտում ընկերության գլխավոր գրասենյակում՝ 15%-ը միայն»[98]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծելով Հայաստանում կանանց տնտեսական իրավունքի իրացման ոլորտը

[98] Report on the State of the Industry - Enterprise Incubator Foundation, 2018
http://www.eif.am/eng/researches/report-on-the-state-of-the-industry/?fbclid=IwAR0bxL4HHLPXhyUonUjx27yuJIxvWa7kXbfc6scT8IvD7HESPcrKqsopPB4

կարելի է փաստել հետևյալ հիմախնդիրների առկայությունը՝

- կանանց աշխատանքային իրավունքների դե յուրե և դե ֆակտո անհամապատասխանությունը ՀՀ-ում.
- աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականությունը.
- աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հնարավորությունների պակասը.
- կանանց գործարարության զարգացման խնդիրը.
- աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմի պակասը.
- ոլորտին վերաբերող օրենքների և ծրագրերի գենդերային կույր լինելը:

Ուստի, ընդունելով աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում բոլոր շահագրգիռ կողմերի իրազեկվածության և գենդերային զգայունության բարձրացման անհրաժեշտությունը, առաջարկվում է կատարել հետևյալ գործողությունները՝

- ապահովել ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքը, 30-րդ և 86-րդ հոդվածով նախատեսված կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանման մասին դրույթը.
- կյանքի կոչել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումների շրջանակում արված հանձնարարականները՝ կատարելով համապատասխան լրամշակումներ ՀՀ գենդերային քաղաքականության նոր ռազմավարական ծրագրում և միջոցառումների ծրագրում, առաջնահերթությունը տալով սոցիալ-տնտեսական ոլորտին վերաբերող նպատակադրումներին,
- իրականացնել իրազեկման միջոցառումներ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ՝ օրենքով ընձեռվող հնարավորությունների քարոզչության և կիրարկման նպատակով.
- ապահովել կանանց համար ընտանեկան և մասնագիտական պարտականությունները համատեղելու հնարավորությունները, աջակցել ընտանեկան պարտականությունների հավասար բաշխման և փոխադարձ հարգանքի վրա հիմնված ընտանիքի մոդելների ստեղծմանը.

- ապահովել կանանց ձեռներեցության աջակցության ռազմավարության արդիականացումը և քաղաքականության մասով կառուցողական գործընկերության ձևավորումը տեղափոխելով կանանց ձեռներեցության աջակցությունը դեպի ավելի արդյունավետ մակարդակ.
- վերապատրաստումների ապահովման համապատասխանության և որակի հարցում աջակցելու նպատակով կառավարությունը պետք է դիտարկի ՓՄՁ-ների հմտությունների մասին տվյալների հավաքման և վերլուծության համակարգի ստեղծումը.
- ապահովել ՓՄՁ-ների զարգացման խորհրդի շրջանակի ընդլայնումը և ձեռնարկատիրության ուսումնառության ու կանանց ձեռներեցության հարցերով աշխատանքային խմբերի ներդրումը: Կարևոր է ձևավորել Խորհրդի ներուժը՝ մարդկային կապիտալի զարգացման քաղաքականության բոլոր ոլորտներում ամենատարբեր շահեկիցներին համակարգելու նպատակով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

- Իրականացնել աշխատանքային օրենսդրության գենդերային փորձաքննություն և ուղղորդում՝ ապահովելու կանանց աշխատանքային իրավունքների հավասար իրացումը:
- Ստեղծել աշխատանքային օրենսդրության կատարման վերահսկումն իրականացնող կառույց:
- Սահմանել քվոտաներ մասնավոր և պետական կազմակերպությունների կառավարման վերին օղակներում, պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների խորհուրդներում կանանց բավականաչափ ընդգրկվածություն ապահովելու նպատակով:

***

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ օրենքներ և իրավանորմատիվային փաստաթղթեր

- ՀՀ Սահմանադրություն, 2005
- ՀՀ Սահմանադրություն, 2015
- «Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 2004
- «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, 2005
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 2005
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 2009
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, 2013
- Գենդերային քաղաքականության հայեցակարգ, 2010 https://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf
- Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը
- Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը
- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի Իրականացման գործողությունների ազգային ծրագիր
- ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 483-Ն որոշում
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք
- «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, 2013 https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734
- Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրեր
- Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» որոշում

Միջազգային փաստաթղթեր

- Պեկինի հռչակագիր և Գործողությունների ծրագիր (1995)
- Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիա (1960)
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, CEDAW (1979)
- CEDAW կոմիտեի եզրափակիչ դիտողությունները

- Committee on the Elimination of Discrimination against Women ´´Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia´´, 25 November 2016 https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/28/PDF/N1640228.pdf?OpenElement
- A World Ready to Learn: Prioritizing quality early childhood education, global report, UNICEF https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/A%20World%20Ready%20to%20Learn_MAIN%20REPORT%20%28embargoed%20until%209%20APRIL%29.pdf
- Կայուն զարգացման նպատակներ https://www.un.am/hy/p/sdgs-in-general
- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձև http://peacewomen.org/countries_and_regions/393

Վիճակագրական նյութեր

- Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019 https://www.armstat.am/am/?nid=82&id=2215
- Հայաստանը թվերով, Կենսամակարդակ և սոցիալական ոլորտ, 2019 https://www.armstat.am/file/article/armenia_2019_5.pdf
- Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին https://www.armstat.am/am/?nid=82&id=2182
- Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Հայաստան. Ոչ նյութական աղքատությունը, 2018 https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf
- ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ., https://www.armstat.am/file/article/soc_12_3-4.pdf
- Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2009, https://www.armstat.am/am/?nid=82&id=1094
- Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Հայաստան. Ոչ նյութական աղքատությունը, 2009, https://www.armstat.am/am/?nid=82&id=1085
- Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://armstat.am/am/?nid=82&id=2226
- Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2018 թթ. https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf

Հետազոտություններ

- 2020 Գենդերային բացի համաշխարհային զեկույց, http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2020.pdf
- 2019 Մարդկային զարգացման զեկույց, http://hdr.undp.org/en/content/2019-human-development-index-ranking

- Սոցիալական դիտման զեկույց 2019, https://gtmarket.ru/ratings/gender-equity-index-un/info
- Մարդկային կապիտալի զեկույց, Համաշխարհային տնտեսական ֆորում 2017, https://www.weforum.org/reports/the-global-human-capital-report-2017
- ԳՀԱԿ, Հայաստանի գենդերային բարոմետր, Երևան, 2015 http://www.ysu.am/files/Gender%20Barometer.Armenia.English.pdf
- Կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն, ՄԱԲՀ, 2016 http://armenia.unfpa.org/hy/node/7000
- World Bank. 2020. Women, Business and the Law 2020. Women, Business and the Law. Washington, DC: World Bank. doi:10.1596/978-1-4648-1532-4. License: Creative Commons Attribution CC BY 3.0 IGO https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32639/9781464815324.pdf?sequence=10
- Gender policy in Armenia and the right of women entrepreneurship http://employers.am/News.aspx?NewsId=39&lang=eng
- Gender Assessment USAID/Armenia,2020
- OECD et al. (2020), SME Policy Index: Eastern Partner Countries 2020: Assessing the Implementation of the Small Business Act for Europe, SME Policy Index, European Union, Brussels/OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/8b45614b-en https://www.oecd.org/global-relations/SMEPI-EaP-2020-Armenia.pdf
- ՎԶԵԲ «Գործարար կանայք» ծրագիր, http://www.eu4business.eu/hy/programme/gortsarar-kanayk
- Report on the State of the Industry, Enterprise Incubator Foundation, 2018 http://www.eif.am/eng/researches/report-on-the-state-of-the-industry/?fbclid=IwAR0bxL4HHLPXhyUonUjx27yuJIxvWa7kXbfc6scT8IvD7HESPcrKqsopPB4
- «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց, ՄԱԶԾ, ՄԱԲՀ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, 2015 https://www.un.am/up/library/Assessement_2011-2015_Gender%20Policy_arm.pdf
- Կրթության մատչելիության գենդերային ասպեկտները (փորձնական ուսումնասիրություն), «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ, ՕՔՍՖԱՄ, 2014 թ.
- Պեկինի Գործողությունների ծրագրի, Հազարամյակի զարգացման նպատակների, Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում, 2014 http://aawue.am/change/uploads/2014/07/PEKIN-FINAL-1.pdf
- Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների և դատախազների վերապատրաստման ձեռնարկ,

2017 https://rm.coe.int/tm-general-part-women-s-access-to-justice-arm-web/16808e9a3b

- Հայաստան. Կանանց համար հավասար պայմանների ապահովում բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում, Հնարավորությունների և ելքերի տարբերություն՝ կրթության մեջ և աշխատաշուկայում, 2017 http://documents.worldbank.org/curated/en/512861495789491335/pdf/ACS21924-ARMENIA-PUBLIC-ArmeniaGenderandSTEMFINALArmenian.pdf
- Սոցիալական արդարությունը՝ Հայաստանի կրթության համակարգում, Հետազոտության համար հիմք են ծառայել 2003-2015 թվականների TIMSS ստուգատեսից ստացված փաստական տվյալներ, «Բաց հասարակության հիմնադրամներ», 2018, http://www.osf.am/wp-content/uploads/2018/11/Equity_TIMSS_am.pdf
- Հանրակրթական դպրոցների մատչելիությունը. օրենքը գործնականում, 2018, «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ, https://transparency.am/files/publications/1547306001-0-256208.pdf
- Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց, 2016 https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf
- ՀՀ ավագ դպրոցների ընտրված առարկաների ծրագրերի վերլուծություն՝ գենդերային զգայունության տեսանկյունից, վերլուծական տեղեկանք, 2016 http://documents.worldbank.org/curated/en/283891470062701229/pdf/107207-ARMENIAN-PUBLIC-ARMFinalpolicynoteexpandedandeditedJuly.pdf
- Osipov, V. & Sargizova, J. (2015). General assessment of the content of the Armenian literature, Armenian history, and Social Science school subjects from a gender perspective. Yerevan: World Bank
- Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, «Բարև» ՀԿ, 2013
- ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013 http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf
- Republic of Armenia Review of the Implementation of the Beijing Declaration and Platform for Action, Beijing+25, Government report, 2019. https://www.unece.org/fileadmin/DAM/Gender/Beijing_20/Armenia.pdf

Էլեկտրոնային մամուլ

WomenNet.am, Կինը և քաղաքականությունը, Տեղեկատվական-վերլուծական պորտալ http://womennet.am/